

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՄՄԿ ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ - 2014

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ն790

ՆՄՄԿ ոլորտը կարգավորող հրավական ակտերի ձեռնարկ /Կ. Մանուկյան.-եր.: Կրթության ազգային ինստիտուտ, 2014. 192 էջ: ՆՄՄԿ համակարգի նորմատիվ-հրավական ակտերի ժողովածուի նյութերը հավաքել և կազմել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության և ուսուցման բաժնի գլխավոր մասնագետ Կարեն Մ.Մանուկյանը:

Խմբագիր՝ բանասիրական գիտ. թեկնածու, ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության մասնագիտական կրթության և ուսուցման բաժնի պետ Սասուն Վ.Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական համակարգի հրավական համակարգը ներկայացնող սույն ձեռնարկը ներառում է ոլորտին առնչվող հրավական արժեք բոլոր ակտերը /ակտերը բերված են բովանդակությունում/: Իրավական ակտերի ժողովածուն նպատակ ունի համակարգում ընդգրկված արժեք երեք հազարի հասնող աշխատակիցներին մեկ կազմի ներքո տրամադրելու ոլորտի վերաբերյալ թե՛ հիմնադրի, թե՛ կրթության կառավարման պետական լիազոր մարմնի և թե՛ ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման և գործադիր մարմինների հրավանդներն ու պարտականությունները, այլ մանրամասներ:

Հաշվի առնելով համակարգի աշխատակիցների կողմից հրավական դաշտի այս կամ այն դրույթի վերաբերյալ տարաբնույթ հարցումները՝ ժողովածուի պահանջն արդիական է.ուստի այն էապես կնպաստի ոլորտի աշխատակիցների հրավական գիտելիքների բարձրացմանը:

Ժողովածուն բաղկացած է ՀՀ օրենքներից, ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգերից և ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի՝ ՀՀ նախարարի հրամանով հաստատված ընթացակարգերից: Ժողովածուում զետեղված են նաև որոշ հրավական ակտեր, որոնք պարունակում են ձև-նմուշներ. բերված են նաև ձև-նմուշները:

Հույս ունենք, որ սույն տեղեկատու կծառայի իր նպատակին և, բացի այդ, օգտակար կլինի նաև նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական համակարգի նկատմամբ հետաքրքրված քաղաքացիներին:

Հեղինակ

ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԹԻՎ ՄԵՎ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո անհրաժեշտություն էր առաջացել մշակել և հաստատել մի շարք օրենքներ, որոնք կկարգավորեին կրթական ոլորտը: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվեց և 2005 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվեց «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում է ՆՄՄԿ համակարգում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպարարական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Զ Ը

Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է նախնական մասնագիտական (արհեստագործական) (այսուհետ՝ արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 2. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասին օրենսդրությունը

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Չորրորդ 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

արհեստագործական կրթություն՝ առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա արհեստագործական կրթական ծրագրերի իրականացում, բացառությամբ վարպետային ուսուցման.

միջին մասնագիտական կրթություն՝ առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում.

մասնագիտական ուսուցում՝ մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների յուրացմանն ու օգտագործմանը նպատակաուղղված ուսուցման գործընթաց.

լրացուցիչ մասնագիտական կրթություն՝ հիմնական մասնագիտական կրթական ծրագրերից դուրս անձի մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, որակավորումը բարձրացնող և լրացնող ուսումնական գործընթաց.

ուսանող՝ համապատասխան ուսումնական հաստատությունում սահմանված կարգով ընդունված և արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական հիմնական ծրագրով ուսումնառող անձ.

ունկնդիր՝ սահմանված կարգով արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական լրացուցիչ ծրագրով ուսումնառող և (կամ) որակավորման բարձրացման (վերապատրաստման, վերաորակավորման) դասընթացին մասնակցող անձ.

դասախոս՝ ուսանողի (ունկնդրի) տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և (կամ) ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող.

արտադրական ուսուցման վարպետ՝ անձի արհեստագործական հմտություններ ապահովող, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և (կամ) մասնագիտական ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող.

մասնագետ՝ միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջին մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց.

արհեստավոր՝ արհեստագործական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է արհեստագործական կրթական ծրագրին և (կամ) որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց.

արհեստագործական ուսումնարան՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է արհեստագործական կրթական ծրագիր.

քուլտ՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր.

ուսումնառության ժամկետ՝ տվյալ մասնագիտական կրթական չափորոշիչով սահմանված ուսումնառության նվազագույն տևողություն.

կրեդիտ (չափանիշ)՝ ուսումնական բեռնվածության և գիտելիքների յուրացման չափաքանակ.

կրեդիտային (չափանիշային) համակարգ՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, ամփոփիչ ստուգումների նախապատրաստումը, գնահատումը և այլն.

հեռավար (դիստանցիոն) ուսուցում՝ համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն ուսանողի կամ ունկնդրի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

դրսեկություն (էքստենսատ)՝ ինքնակրթությամբ և արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով իրականացվող կրթության ձև:

ուսանողական նպաստ՝ ուսանողի ուսման վարձի փոխհատուցում պետական բյուջեի ֆինանսավորման, մասնագիտական ուսումնական հաստատության, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին:

որակի գնահատում (ատեստավորում)՝ արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում:

սոցիալական գործընկեր՝ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, ներառյալ՝ ցանկացած տիպի ուսումնական հաստատություն:

(3-րդ հոդվածը խմբ. 19.05.14 ՅՕ-18-Ն)

Յոդված 4. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և քաղաքացիների իրավունքների պետական երաշխիքները

Պետությունը պայմաններ է ստեղծում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի բնականոն գործունեության և զարգացման համար:

1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մասնագիտական կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.

2) ժամանակակից անձի ու քաղաքացու ձևավորման, հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրության ու զարգացման, աշխատանքային շուկայում մրցունակության և սոցիալական գործընկերության ապահովումը.

3) ուսանողի և ունկնդրի մասնագիտական գիտելիքների և հմտությունների համապատասխանության ապահովումը տնտեսության ու աշխատանքային շուկայի պահանջներին.

4) կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը.

5) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի կառավարման թափանցիկությունն ու կոլեգիալությունը.

6) մրցութայնությունը և հրապարակայնությունը.

7) արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող սուբյեկտների իրավահավասարությունը.

8) արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ինքնավարությունը և վերահսկելիությունը.

9) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մատչելիությունը, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմաններ տրամադրելու և ներառման միջոցով.

10) սոցիալական գործընկերների հետ համագործակցությունը.

11) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակավորումների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին.

12) հայազգի օտարերկրյա քաղաքացիների (սփյուռքի համար) արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու ապահովումը:

2. Պետությունը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատուժի շուկայի կազմը և կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում երաշխավորում է՝

1) մրցութային կարգով արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն՝ պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) սոցիալական գործընկերների պատվերով և ֆինանսավորմամբ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և մասնագիտական ուսուցում.

3) պետական ծրագրերի շրջանակներում մասնագիտական ուսուցում՝ համապատասխան բյուջետային հատկացումների հաշվին.

4) մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու հավասար հնարավորություններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման և ներառման միջոցով:

Պետությունն աջակցում է նախնական մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների ուսանողների, ունկնդիրների ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպմանը:

3. Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցութի արդյունքներով արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված

կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

(4-րդ հոդվածը լրաց. 08.02.11 ՀՕ-52-Ն, փոփ. 30.04.13 ՀՕ-39-Ն, խմբ., լրաց. 19.05.14 ՀՕ-18-Ն)

Հոդված 5. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրները

1. Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝

1) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.

2) առաջնային և կարևոր բնագավառների, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի համար մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը աջակցելը.

3) կրթական գործընթացի անընդհատության, շարունակականության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

4) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը.

5) ուսանողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը:

2. Պետությունն ապահովում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում հետևյալ ձևերով.

1) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի կատարելագործում և արդիականացում.

2) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման պետական ծրագրերի մշակում և իրականացում.

3) արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատանքային շուկայի պահանջներին.

4) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ֆինանսավորում՝ պետության պահանջներից ելնելով.

5) սահմանված կարգով արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ուսանողներին և ունկնդիրներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսանողական նպաստներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (գեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր).

6) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգում գիտելիքների ստուգման, ուսուցման կազմակերպման նոր ձևերի, ներառյալ՝ կրեդիտային համակարգի ներդրում.

7) կրթական նոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրում:
(5-րդ հոդվածը լրաց. 08.02.11 ՅՕ-52-Ն)

Գ Լ ՈՒ Խ 2

ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Չորված 6. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը ներառում է՝

1) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, պետական հավատարմագրման չափանիշները.

2) հիմնական և լրացուցիչ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունները և համապատասխան այլ կազմակերպություններ.

3) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կառավարման լիազորված մարմինները (այսուհետ՝ լիազոր մարմիններ).

4) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի սոցիալական գործընկերները:

Չորված 7. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները և կրթական ծրագրերը

1. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ, որոնք ապահովում են՝

1) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակը և նրա գնահատման հիմքերը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքում մասնագիտական կրթական քաղաքականության միասնականությունը.

3) օտարերկրյա պետությունների հետ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակավորումների և ավարտական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման հիմքերի համեմատելիությունն ու համարժեքությունը:

2. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները ներառում են՝

1) ընդհանուր պահանջներ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի նկատմամբ.

2) պահանջներ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի, դրանց իրականացման պայմանների, ներառյալ՝ տեսական ուսուցման, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ձևերի, յուրաքանչյուր մասնագիտությամբ շրջանավարտների պատրաստման մակարդակի վերաբերյալ.

3) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման ժամկետները, կրեդիտային համակարգի առկայության դեպքում՝ կրեդիտների քանակը.

4) սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալը:

3. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման ու հաստատման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն):

4. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է հետևյալ կրթական ծրագրերով.

1) արհեստագործական հիմնական կրթական ծրագրով՝ արհեստավորի.

2) միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝ մասնագետի.

3) արհեստագործական և միջին մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերով՝ վերապատրաստման, մասնագետների որակավորման բարձրացման և վերաորակավորման:

5. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները կարող են իրականացնել նաև փորձնական մասնագիտական կրթական ծրագրեր՝ լիազորված մարմնի սահմանած կարգով:

6. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները համապատասխան գործատուների առաջարկությունների հիման վրա մշակում և հաստատում են պետական կրթական չափորոշիչներին համապատասխանեցված ուսուցանվող մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, որոնք երաշխավորում են կրթական տարբեր փուլերում ուսանողների ուսումնառության գործընթացը (մուտքը կրթական ծրագիր և ելքը ծրագրից)՝ ապահովելով կրեդիտների կուտակումը, փոխանցումը և որակավորման աստիճանների շնորհումը:

7. Կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով ապահովվում է ուսանողների շարժունությունը միջին մասնագիտական կրթական համակարգի ներսում, միջին մասնագիտական համակարգից՝ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգ և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգից՝ միջին մասնագիտական կրթական համակարգ:

Հողված 8. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճանները, ուսումնառության ժամկետները և ձևերը

1. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են արհեստագործական կրթության «արհեստավոր» և միջին մասնագիտական կրթության «մասնագետ» որակավորման աստիճանները:

2. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ուսումնառության ժամկետները սահմանվում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներով՝ կախված մասնագիտության ուսուցման առանձնահատկությունից և ուսանողի մինչ այդ ստացած կրթությունից կամ կրեդիտների քանակից:

3. Արհեստագործական կրթության արհեստավորի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի է:

Կառավարության որոշմամբ կարող է սահմանվել արհեստագործական կրթական ծրագրով իրականացվող կրթության այլ հիմք և ուսուցման տևողություն:

Միջին մասնագիտական կրթության մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 2 տարուց մինչև 5 տարի է:

4. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրի՝ նույն մասնագիտության տարբեր աստիճաններում ուսումնառությունը չի համարվում երկրորդ մասնագիտական կրթության ստացում:

5. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության համապատասխան աստիճանի ավարտական փաստաթուղթ ստացած անձինք իրավունք ունեն սահմանված կարգով շարունակելու ուսումնառությունը հաջորդ աստիճանի կրթական ծրագրով:

6. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով՝ առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն), դրսեկություն (էքստեռնատ), անհատական մասնագիտական ուսուցում (վարպետային ուսուցում): Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու առկա և այլ ձևերի զուգակցումը չի արգելվում:

Յեռավար (դիստանցիոն), դրսեկության (էքստեռնատ) և անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցում) ձևերով ուսուցման մասնագիտությունների ցանկերը և կարգերը հաստատում է կառավարությունը:

Յոդված 9. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունները

1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատում է կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ՝ համապատասխան ոլորտների լիազորված մարմինների առաջարկությամբ:

2. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների մասնագիտացումների ցանկերը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ համապատասխան ոլորտների լիազորված մարմինների առաջարկությամբ:

3. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում նոր մասնագիտություն կարող է ընդգրկվել միայն տվյալ մասնագիտության չափորոշիչի առկայության դեպքում:

Չորված 10. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, նրանց խնդիրներն ու տեսակները

1. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

Ոչ պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:

2. Արհեստագործական կրթության համակարգում սահմանվում է արհեստագործական ուսումնական հաստատության հետևյալ տեսակը՝ **արհեստագործական ուսումնարան**:

Միջին մասնագիտական կրթության համակարգում սահմանվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության հետևյալ տեսակը՝ **քոլեջ**:

3. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների լիազորված պետական մարմիններին որոշում է կառավարությունը:

4. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներն են՝

1) ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը, անձի մտավոր և հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը.

2) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը.

3) ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

4) բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

5) սոցիալական գործընկերների հետ համագործակցության ապահովումը.

6) ուսանողների մեջ հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը:

Չորրված 11. Ընդունելությունը արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում

1. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական ընդհանուր կրթություն ունեցող անձանց դիմումներով, օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցութային հիմունքներով: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիները նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններով՝ իրենց ընտրությամբ:

2. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունը իրավունք ունի ընդունելություն հայտարարելու լիցենզիայի առկայության դեպքում:

3. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունը պարտավոր է դիմորդին ծանոթացնել իր լիցենզիային, կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), որի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են դիմորդի ընդունելության փաստաթղթերում:

4. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգն ըստ կրթական

ծրագրերի սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

5. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կատարվում է կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկին համապատասխան մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:

(11-րդ հոդվածը լրաց. 23.06.10 ՅՕ-113-Ն)

Հոդված 12. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության կազմակերպումը

1. Արհեստագործական կրթությունը և ուսուցումը իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, քոլեջներում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպությունների ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, համապատասխան լիցենզիա ունեցող և անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող վարպետների մոտ:

2. Միջին մասնագիտական կրթությունը և ուսուցումն իրականացվում է քոլեջներում, համապատասխան մասնագիտությունների գծով կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններում (դրանց առանձնացված ստորաբաժանումներում)՝ լիցենզիայի առկայությամբ:

3. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունը կազմակերպվում է պետական կրթական չափորոշիչների, գործատուների առաջարկությունների հիման վրա համապատասխան ուսումնական հաստատության մշակած ու հաստատած ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի միջոցով:

4. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով և կրթական ծրագրերով նախատեսված և հիմնարկներում ու կազմակերպություններում իրականացվող պրակ-

տիկաները (ուսումնական, արտադրական, ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային, այլն) իրագործվում են այդ հիմնարկների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն:

5. Պետական հավատարմագրում չունեցող կրթական ծրագրերով կամ ինքնակրթությամբ կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Հոդված 13. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթերը

1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձին տրվում է արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթ՝ տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության կամ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կողմից:

2. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ավարտական փաստաթղթերն են՝

- 1) արհեստագործական կրթության դիպլոմը և դրա ներդիրը.
- 2) միջին մասնագիտական կրթության դիպլոմը և դրա ներդիրը.
- 3) մասնագիտական ուսուցման, ներառյալ՝ վարպետային ուսուցման որակավորման վկայականը:

3. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կամ լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին տրվում է ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների նշումով:

Գ Լ ՈՒ Խ 3

ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

**Չողված 14. Արհեստագործական և միջին մասնագիտական
կրթության կառավարման համակարգը**

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի կառավարումն իրականացնում են՝

1) կառավարությունը.

2) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը (մարմինները).

3) Հայաստանի Հանրապետության պետական, տարածքային կառավարման մարմինները, որոնց ենթակայությամբ գործում են նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ.

4) արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության գործադիր մարմինը:

**Չողված 15. Արհեստագործական և միջին մասնագիտական
կրթության բնագավառում կառավարության իրավասությունները**

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում կառավարությունը՝

1) հավանություն է տալիս արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությանը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները.

3) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը.

4) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը.

5) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ընդհանրական բնութագրերը և ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի և տևողության, ինչպես նաև այն մասնագիտությունների ցանկը, որով արգելվում է հեռակա, հեռավար, դրսեկության կարգով ուսուցումը.

6) հաստատում է ըստ մասնագիտական կրթության մասնագիտությունների տրվող որակավորումների ցանկերը.

7) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգը, չափանիշները և հավատարմագրի գործողության ժամկետը.

8) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունների, դրանցում ուսուցանվող կրթական ծրագրերի լիցենզավորման կարգը.

9) *(կետն ուժը կորցրել է 19.05.14 ՅՕ-18-Ն)*

10) հաստատում է ֆինանսական միջոցների տրամադրման կարգը, ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսանողական նպաստ և ուսումնական վարկ հատկացնելու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը.

11) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության իրականացման առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն), դրսեկության (էքստեռնատի) և անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման) ձևերով ուսուցման, սահմանամերձ, ինչպես նաև բարձրլեռնային բնակավայր գործուղման համար մասնագիտությունների ցանկերը և կարգերը.

12) ապահովում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության զարգացումը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

(15-րդ հոդվածը լրաց. 04.02.10 ՅՕ-22-Ն, 08.02.11 ՅՕ-52-Ն, փոփ.

11.05.11 ՅՕ-153-Ն, 30.04.13 ՅՕ-39-Ն, 19.05.14 ՅՕ-18-Ն)

Հոդված 16. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝

1) մշակում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը.

2) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները և որակավորումների բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների ու կրթական աստիճանների.

3) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների մասնագիտացումների ցանկերը.

4) իր իրավասությունների շրջանակում մշակում և հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուց-

ման համակարգի գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտեր.

5) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը.

6) հաստատում է ուսանողների (ունկնդիրների)՝ մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը.

7) իր իրավասության շրջանակներում իրականացնում է վերահսկողություն արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարման, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և նրանց պատրաստման որակի նկատմամբ.

8) հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում որակի գնահատման և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգը.

9) իրականացնում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորումը, բացառությամբ բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրերի, մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրումը.

10) սահմանում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության փորձնական կրթական ծրագրերի իրականացման կարգը.

11) հաստատում է մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը.

12) արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով աջակցում է արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման մարմինների ձևավորմանը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններ:

(16-րդ հոդվածը լրաց. 04.02.10 ՀՕ-22-Ն)

Հոդված 17. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում կառավարման այլ մարմինների իրավասությունները

Կառավարության լիազորած կառավարման այլ մարմինները արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում՝

1) իրենց իրավասության սահմաններում մասնակցում են հետևյալ գործընթացների իրականացմանը.

- արհեստագործական և միջին մասնագիտական պետական կրթական չափորոշիչների մշակում, մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկերի, մասնագետների որակավորման պահանջների, ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նկատմամբ պահանջների ձևավորում, մեծահասակների կրթության և ուսուցման կազմակերպում,

- շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման և որակավորման աստիճանների շնորհում,

- բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման և վերաորակավորման կազմակերպում.

2) ապահովում են ուսանողների, ունկնդիրների ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակտիկաների և գործնական աշխատանքների իրականացումը.

3) ուսումնասիրում են աշխատանքային շուկայի պահանջարկը և առաջարկություններ են ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին մասնագետների և նրանց պատրաստման պայմանների վերաբերյալ.

4) հաստատում են իրենց ենթակայության արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները.

5) արհեստագործական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների հիմնական գործատուները կարող են մշակել մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության հիմքերը (մեխանիզմները) և դրանք առաջարկել համապատասխան լիազոր մարմին և կազմակերպությանը:

Յոդված 18. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության լիազորությունները և կառավարումը

1. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենքներին, սույն օրենքին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան՝

1) ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելությունը, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներով.

2) ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը.

3) իրականացնում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր.

4) աջակցում է ուսանողական ինքնակառավարմանը, ուսանողների մասնակցությանը ուսումնական հաստատության կողմից իրականացվող ծրագրերում.

5) իրականացնում է մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր:

2. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազոր պետական մարմինը, հաստատության գործադիր մարմինը (տնօրեն) և ուսումնական հաստատության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ):

3. Խորհուրդը տվյալ ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով: Խորհուրդը ձևավորվում է մանկավարժական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից:

Խորհրդի ձևավորման կարգը սահմանում է լիազոր մարմինը: Խորհրդի թվաքանակը սահմանվում է տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, սակայն ոչ ավելի, քան 20 հոգի:

Խորհրդի լիազորությունների մեջ մտնում են հաստատության բյուջեի, ռազմավարական ծրագրերի, ուսման վարձի հաստատումը, տնօրենի ընտրությունը, ինչպես նաև ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հիմնադրի որոշմամբ կամ տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ ձևավորվում են գիտական խորհուրդներ և կարող են ձևավորվել խորհրդակցական և վերահսկողություն իրականացնող մարմիններ:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության գործադիր մարմնի՝ տնօրենի նշանակման (ընտրության) և ազատման, ինչպես նաև նրա գործունեության կարգը սահմանվում է տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

4. Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում է լիազորված մարմնի ղեկավարը:

Հոդված 18.1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատության տնօրենը և նրա իրավասությունը

1. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն, բացառությամբ ոստիկանության ուսումնական հաստատության համապատասխան ստորաբաժանումների պետերի, կարող է ընտրվել կամ նշանակվել այն անձը, որն ունի արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) (այսուհետ՝ Հավաստագիր):

2. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենն ընտրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մրցութային կարգով:

3. Արհեստագործական և միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը նշանակվում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել, իսկ արհեստագործական և միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատության տնօրեն, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավար կարող է նշանակվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և Հավաստագիր ստացած անձը:

5. Հավաստագիր ստանալու համար կարող է դիմել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն, սույն օրենքով սահմանված կարգով ստա-

ցած վերապատրաստման վկայական և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ մասնագիտական առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

6. Հավաստագիր ստանալու համար դիմած անձի վերապատրաստում կարող են իրականացնել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված (երաշխավորված) կազմակերպությունները:

7. Հավաստագրումն անցկացվում է հետևյալ փուլերով.

1) փաստաթղթերի համապատասխանության ճանաչում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած փաստաթղթերի ցանկի.

2) քննություն՝ թեստավորման և հարցազրույցի միջոցով.

3) Հավաստագրի շնորհում՝ հինգ տարի ժամկետով:

8. Հավաստագրման քննությունների կազմակերպման և հավաստագրման ընթացակարգերը, ինչպես նաև հավաստագրման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

9. Հավաստագրումը կազմակերպվում է առնվազն տարին մեկ անգամ:

10. Հավաստագրման գործընթացի մասին հայտարարությունը հրապարակվում է քննություններն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

11. Հավաստագրման քննությունների հարցաշարի բովանդակությունը կազմվում է կրթության բնագավառում իրավական, կառավարչական, մանկավարժական, հոգեբանական, ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքները և գործնական կարողությունները ստուգելու նպատակով:

12. Հավաստագրման քննությունը հավաստագրման ընթացակարգով հանձնած անձին շնորհվում է Հավաստագիր:

13. Հավաստագիր ստացած անձանց ցուցակը հրապարակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ հավաստագրման ընթացակարգով սահմանված ժամկետում:

14. Հավաստագրման քննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմին՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

15. Հավաստագիր ստացած անձը կարող է Հավաստագիրը ստանալու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, մասնակցել արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին, իսկ ոչ պետական ուսումնական հաստատության, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեպքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվել ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:

16. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար տնօրենի թեկնածուն խորհրդին ներկայացնում է՝

1) կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած ցանկին համապատասխան փաստաթղթերը.

2) Հավաստագիրը.

3) ուսումնական հաստատության զարգացման հինգ տարվա ծրագիրը:

17. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թեկնածուի ղեկավարման գործա-

կան հմտությունները ստուգելու նպատակով խորհուրդն անցկացնում է հարցազրույց՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած հարցաշարի հիման վրա:

18. Մրցույթում հաղթած և օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի ղեկավարի հետ աշխատանքային պայմանագիր կնքած արհեստագործական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը պաշտոնավարում է մինչև իր լիազորությունների ավարտը՝ անկախ Հավաստագրի հնգամյա ժամկետի լրանալուց, իսկ ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը պաշտոնավարում է մինչև հավաստագրի ժամկետի լրանալը:

19. Հավաստագիր ստացած անձը կարող է մինչև Հավաստագրի ժամկետի լրանալը դիմել և սահմանված կարգով հավաստագրվել:

20. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն չի կարող առաջադրվել և ընտրվել (նշանակվել) այն անձը, որը՝

1) սահմանված կարգով չի ստացել ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագիր.

2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

3) դատական կարգով զրկվել է մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեությանը /այդ հիվանդությունների ցանկը հաստատում է կառավարությունը/.

5) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն

դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

21. Արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը՝

1) խորհրդի քննարկմանն է ներկայացնում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական հաշվետվությունը, արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.

2) պատասխանատու է մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների (որակավորման չափորոշիչների) և կարողությունների զարգացմանը միտված մոդուլային ուսուցման ծրագրի կատարման չափանիշներն ապահովող համապատասխան կրթության և ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսանողների առողջության պահպանման, կադրերի ընտրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջների պահպանման համար, ինչպես նաև օրենքով և արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորությունների ապահովման համար.

3) ղեկավարում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը, աջակցում է տվյալ ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքին.

4) կազմում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և տվյալ ուսումնական հաստատության խորհրդի հավանությամբ ներկայացնում լիազոր մարմին.

5) խորհրդի հավանությանն է ներկայացնում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը:

6) իրականացնում է օրենքով և տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

(18.1-ին հոդվածը լրաց. 19.05.14 ՅՕ-18-Ն)

Հոդված 19. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովումը և դրա նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման կազմակերպումը իրականացնում է տվյալ ուսումնական հաստատությունը կամ մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունը:

2. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի նկատմամբ պետական վերահսկողությունը նպատակաուղղված է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության ապահովմանը, մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ֆինասավորման համար հատկացված պետական բյուջեի և այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը:

3. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում են կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, լիազոր մարմինները՝ լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ՝ որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

4. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը, միասնականությունը և հրապարակայնությունը:

Չոդված 20. Մասնագիտական կրթական գործունեության (կրթական ծրագրերի) լիցենզավորումը և արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության հավատարմագրումը

1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական գործունեություն (կրթական ծրագրեր) կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

2. Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության և ուսուցման ուսումնական հաստատությունը լիցենզավորում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

3. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական գործունեության լիցենզավորումն իրականացվում է տվյալ կրթական ծրագրի յուրաքանչյուր մասնագիտության համար առանձին:

4. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների և կրթական ծրագրերի պետական հավատարմագրումն իրականացվում է լիցենզիայի առկայության դեպքում՝ ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների:

5. Հայաստանի Հանրապետության արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգում պետական հավատարմագրման են ենթակա արհեստավորի և մասնագետի կրթական ծրագրերը:

6. *(մասն ուժը կորցրել է 11.05.11 ՅՕ-153-Ն)*

7. Պետական հավատարմագրման վկայականը հավաստում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության

իրականացրած կրթական ծրագրերի մակարդակի, դրանց բովանդակության և շրջանավարտների կրթության որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

8. Ուսումնական հաստատության մասնաճյուղերը հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող մասնագիտական ուսումնական հաստատության հայտի հիման վրա:

9. Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա այլ պետությունների արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, այլ կազմակերպությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները և դրանց մասնաճյուղերն իրավահավասար են պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին և լիցենզավորվում, հավատարմագրվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

10. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթղթում (դիպլոմում) նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը:

11. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ստանալ նաև հասարակական հավատարմագրում, որը հասարակական հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից իրենց չափանիշներին և պահանջներին մասնագիտական ուսումնական հաստատության գործունեության որակական չափանիշների համապատասխանության ճանաչումն է:

(20-րդ հոդվածը փոփ. 11.05.11 ՅՕ-153-Ն)

Գ Լ ՈՒ Խ 4

ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ, ՆՐԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 21. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ուսանողները և ունկնդիրները

1. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողն իրավունք ունի՝

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում են ուսումնական հաստատությունները.

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները.

3) մասնակցելու արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին.

4) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, անցնելու ուսումնական այլ դասընթաց՝ հաստատության սահմանած կարգով.

5) վճարովի ուսուցման համակարգից փոխադրվելու անվճար ուսուցման համակարգ.

6) օգտվելու ուսման տարեկան վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից (ուսումնական նպաստների ձևով)՝ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

7) օգտվելու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, ինչպես նաև իրենց ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից, նվիրատվություններից և դրամաշնորհներից.

8) ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

Առաջնահերթ և կարևոր ոլորտների մասնագիտությունների ցանկը և քանակը հաստատում է կառավարությունը, ինչպես նաև սահմանված կարգով փոխհատուցում է այդ ուսանողների նպաստը:

Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է կառավարությունը.

9) ուսանողները կարող են օգտվել օրենքներով և տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2. Առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ուսանողին կարող է տրամադրվել ակադեմիական արձակուրդ, որի ընթացքում նա պահպանում է ուսանողի իր իրավունքը: Ակադեմիական արձակուրդ տրամադրելու կարգը և ժամկետները սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքը կարող է վերականգնվել՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

4. Ուսանողի տեղափոխությունը պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատություն կարող է իրականացվել մեկ այլ պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատությունից:

5. Ունկնդիրները մասնագիտական կրթական ծառայություններ ստանալու մասով օգտվում են ուսանողների իրավունքից:

6. Ուսանողը կամ ունկնդիրը կրում է պարտականություններ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

(21-րդ հոդվածը լրաց. 08.02.11 ՅՕ-52-Ն)

Հոդված 22. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի աշխատողները

1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում նախատեսվում են մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմեր:

2. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մանկավարժական կազմում ընդգրկվում են դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:

3. Մանկավարժական աշխատողների տարակարգերին և պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման և անցկացման, վերապատրաստման և ատեստավորման կարգերը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

4. Մասնագիտական կրթության համակարգի աշխատողները իրավունք ունեն օգտվելու օրենքներով և տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Գ Լ ՈՒ Խ 5

ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

**Հոդված 23. Արհեստագործական և միջին մասնագիտական
կրթության և ուսուցման համակարգի սեփականու-
թյան հարաբերությունները**

1. Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով հիմնադիրը (հիմնադիրները) ուսումնական հաստատությանը սեփականության կամ օգտագործման (անհատույց կամ հատուցելի) իրավունքով տրամադրում է շենքեր, շինություններ, տրանսպորտ, հողամասեր, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք:

Պետական արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնադիրը (հիմնադիրները) գույքը տրամադրում է անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով:

2. Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությանը նվիրատվության, հանգանակականության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

Յոդված 24. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի ֆինանսավորումը

1. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացնում է հիմնադիրը (հիմնադիրները)՝ օրենքով սահմանված կարգով:

2. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգը ըստ կառավարության սահմանած չափի և հատկացումների ֆինանսավորվում է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

3. Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ են՝

1) սեփական միջոցները, որոնք գոյանում են ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ և օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներից.

2) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, դրամաշնորհներն ու վարկերը.

3) Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեները:

4. Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները սահմանված կարգով իրականացնում են իրենց տնտեսական և ֆինանսական գործունեության հաշվապահական հաշվառումը:

5. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում տնտեսական և ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրենց լիազորությունների սահմանում իրականացնում են լիազորված մարմինները:

6. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ կառավարության սահմանած կարգով:

Գ Լ ՈՒ Խ 6

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 25. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 18-րդ հոդվածի երրորդ մասը ուժի մեջ է մտնում 2008 թվականի մայիսի 25-ից:

2. Սույն օրենքի 20-րդ հոդվածի առաջին մասը արհեստագործական կրթական ծրագրերի մասով ուժի մեջ է մտնում 2006 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 20-րդ հոդվածի չորրորդ մասը արհեստագործական կրթական ծրագրերի մասով ուժի մեջ է մտնում 2006 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն օրենքի 21-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետն ուժի մեջ է մտնում 2007 թվականի սեպտեմբերի 1-ից:

5. Սույն օրենքի 21-րդ հոդվածի չորրորդ մասը ուժի մեջ է մտնում 2009 թվականի սեպտեմբերի 1-ից:

6. Մինչև 2006 թվականի հունվարի 1-ը միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները վերանվանվում են քոլեջներ:

7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

(25-րդ հոդվածը փոփ. 30.04.08 ՀՕ-57-Լ)

Հայաստանի Հանրապետության

Նախագահ

Ռ. Քոչարյան

**ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՂԹ՝
ՄԻՏՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆԸ**

«Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների միջոցառումների համալիր ծրագրով» նախատեսված էր Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի և կանոնների վերանայում, որի նպատակն էր հնարավորինս վերացնել կոռուպցիոն ռիսկերը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մշակվում և հաստատվում էր նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման ընդունելության կարգերը:

2012 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվեց և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 254-Ն հրամանով հաստատվեց «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը», որով հանվեց ընդունելության քննությունները՝ բացառությամբ արվեստի, սպորտի, առողջապահության ոլորտների մասնագիտական առարկաներից, ինչպես նաև մեկ միասնական կարգով սահմանվեց առկա և հեռակա ուսուցմամբ ընդունելությունը, ինչը կիրառվելու է հաջորդ ուսումնական տարիների համար նույնպես:

Կ Ա Ր Գ

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) (այսուհետ՝ արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ընդունելության կարգը:

2. Հաստատությունում առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական կրթություն ունեցող, իսկ հեռակա ուսուցմամբ ընդունելությունը՝ առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումներով:

3. Հաստատությունում ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ սույն կարգի 24-րդ կետով սահմանված՝ մրցութային հիմունքով, բացառությամբ՝ արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտի (այսուհետ՝ Ոլորտային) միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների:

4. Օտարերկրացիները՝ իրենց ընտրությամբ, Հաստատություն կա-
րող են ընդունվել սույն կարգով՝ միայն վճարովի համակարգ կամ ՀՀ
կառավարության կողմից սահմանված կարգով:

2. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Հաստատությունն ընդունելությունն իրականացնում է պետական
կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Լիազորված մարմին)
կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված՝

1) արհեստագործական և (կամ) միջին մասնագիտական կրթական
ծրագրով առկա (ստացիոնար) ուսուցմամբ անվճար և վճարովի տե-
ղերին համապատասխան.

2) միջին մասնագիտական կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ
վճարովի տեղերին համապատասխան:

6. Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա
ուսուցման տեղերը հատկացվելուց հետո՝ 15 աշխատանքային օրվա
ընթացքում տնօրենը (ռեկտորը) հրապարակում է ընդունելության
պայմանների վերաբերյալ հայտարարություն, որը ներառում է դիմոր-
դի փաստաթղթերի ընդունման և մրցույթի անցկացման ժամկետները,
ինչպես նաև յուրաքանչյուր մասնագիտության՝

1) կրթության ձևը՝ առկա (ստացիոնար) կամ հեռակա, ինչպես նաև
հեռավար (դիստանցիոն), դրսեկության ձևով ուսուցման պայմանները,

2) կրթության հիմքը՝ առնվազն հիմնական կամ միջնակարգ,

3) Լիազորված մարմնի կողմից հատկացված անվճար և վճարովի
տեղերի քանակը,

4) քննության օր(եր)ը, ժամը, վայրը և տեսակը (գրավոր կամ բանա-
վոր),

5) ուսման վճարի չափը,

6) ուսման տևողությունը,

7) որակավորումը,

8) և այլ տեղեկատվություն:

7. Առկա (ստացիոնար) ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի փաստաթղթերն ընդունվում են ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 25-ը (Ոլորտային մասնագիտություններով՝ Հաստատության սահմանած ընդունելության քննության օրվանից 2 օր առաջ, բայց ոչ ուշ, քան օգոստոսի 23-ը), իսկ հեռակա ուսուցման համար՝ մինչև նոյեմբերի 25-ը:

8. Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվում է օգոստոսի 26-27-ը: Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են Հաստատության տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո:

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

9. Ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով՝ Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա ընդունելության տեղերը հատկացվելուց հետո՝ 3 օրվա ընթացքում Հաստատությունում տնօրենի (ռեկտորի) հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ:

10. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը՝ Հաստատության տնօրենը (ռեկտորը), նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարը և անդամները:

11. Քննությունների անցկացման նպատակով ստեղծվում են քննական հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել Հաստատության, ինչպես նաև հրավիրված մասնագետներ: Քննական հանձնաժողովների նախագահներին հաստատում է Լիազորված մարմինը՝ ըն-

դունող հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, իսկ կազմերը հաստատում է Հաստատության տնօրենը (ռեկտորը):

Ընդունող հանձնաժողովի նախագահը՝ ընդունելության տեղերը հատկացվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Լիազորված մարմինն է ներկայացնում քննական հանձնաժողովների նախագահ/ներ/ի թեկնածություն/ներ/ը:

12. Ընդունող հանձնաժողովը սույն կարգին և Հաստատության տնօրենի (ռեկտորի) հաստատած աշխատանքային պլանին համապատասխան ապահովում է՝

1) առկա (ստացիոնար) և/կամ հեռակա ուսուցման ընդունելության կազմակերպումն ու անցկացումը,

2) դիմորդների ընդունելության փաստաթղթերի ընդունումը և ձևակերպումը, մատյանում դիմորդների գրանցումը, փաստաթղթերի ընդունման մասին ստացականի լրացումը և հանձնումը,

3) մասնագիտական կողմնորոշման նպատակով դիմորդների համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումը,

4) սույն կարգի 22-րդ կետով նախատեսված արտոնություններ ունեցող դիմորդներից անհրաժեշտ փաստաթղթերի պահանջումը և համապատասխան ձևակերպումը,

5) ընդունելության մրցույթի վերաբերյալ տեղեկատվության և քննական առարկաներից խորհրդատվության տրամադրումը,

6) Ոլորտային մասնագիտություններով դիմորդների ընդունելության ձևակերպումը՝ քննությունների ժամկետի (ամսաթիվ, ժամ) նշումով և քննական թերթիկների հանձնումը դիմորդներին,

7) ընդունելության մրցույթի անցկացումը և Հաստատություն ընդունված դիմորդներին հրամանագրելու մասին որոշման ընդունումը,

8) ընդունելության համար Հաստատության շենքի նախապատրաստումը, տարածքների հատկացումը և կահավորումը, ինչպես նաև

ընդունելության ընթացքում հերթապահությունը և տարածքի պահպանումը,

9) ընդունելությանն առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերումը, ձևակերպումը,

10) դիմորդին և (կամ) նրա օրինական ներկայացուցչին Չաստատության լիցենզիային և կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին, կնքվելիք պայմանագրին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում) և կրթության գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին ծանոթացումը:

13. Ընդունելության նախապատրաստման և կազմակերպմանն առնչվող հարցեր քննարկելու համար ընդունող հանձնաժողովը պարբերաբար անց է կացնում նիստեր, որոնք արձանագրում է հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը, իսկ արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և պատասխանատու քարտուղարը:

14. Ընդունող հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում ու ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները և վերահսկում է ընդունելության գործընթացը,

2) հրապարակում է ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարությունը,

3) ձևավորում և հաստատում է քննական հանձնաժողովների կազմերը, ինչպես նաև կազմակերպում և վերահսկում է այդ հանձնաժողովների աշխատանքները,

4) հաստատում է Ոլորտային մասնագիտություններով ընդունելության քննությունների անցկացման ժամանակացույցը,

5) ընդունող և քննական հանձնաժողովների անդամներին ծանոթացնում է ընդունելության գործընթացը կարգավորող նորմատիվ փաստաթղթերին, ինչպես նաև ապահովում է նրանց աշխատանքային պայմանները,

6) որոշում է ընդունում Ոլորտային մասնագիտություններով դիմորդին ընդունելության քննություններին մասնակցելու թույլտվության վերաբերյալ, որի մասին նշում է կատարում նրա դիմումի վրա,

7) միջոցներ է ձեռնարկում ընդունելության ժամանակահատվածում հասարակական կարգի պահպանության, բժշկական սպասարկման ապահովման ուղղությամբ,

8) պատասխանատու է Հաստատությունում ընդունելության գործընթացի պատշաճ նախապատրաստման, կազմակերպման և անցկացման համար:

15. Ընդունող հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) կատարում է ընդունող հանձնաժողովի նախագահի պարտականությունները՝ նրա բացակայության ընթացքում,

2) ձևավորում է <<Դիմորդի անկյուն>>՝ մասնագիտական կողմնորոշման, ընդունելության կարգի ու պայմանների վերաբերյալ,

3) հսկում է քննական հանձնաժողովների կողմից մշակված քննական նյութերի ճիշտ և ժամանակին ձևակերպումն ու բազմացումը, ապահովում է քննությունների անցկացման համար անհրաժեշտ տարածքներ,

4) կազմակերպում և հսկում է սպասարկող անձնակազմի աշխատանքները:

16. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) ապահովում է ընդունելության հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի լրացումն ու հաշվառումն ըստ սահմանված կարգի.

2) ոլորտային մասնագիտություններով կազմում է դիմորդների խմբերն ըստ քննական առարկաների և լրացնում քննական տեղեկագրերը.

3) հսկում է դիմորդների փաստաթղթերի ճիշտ ձևակերպման, գրանցման մատյանի և հաշվառման այլ փաստաթղթերի վարման ընթացքը.

4) նախապատրաստում է ընդունող հանձնաժողովի նիստերի նյութերը, ընդունելության հետ կապված հարցերի վերաբերյալ տնօրենի

հրամանների նախագծերը, գրառում է ընդունող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

5) պատասխանատու է ընդունելությանն առնչվող բոլոր փաստաթղթերի պահպանման համար:

17. քննական հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում է քննական տոմսերի և քննական այլ նյութերի մշակումը,

2) ընդունող հանձնաժողովի նախագահի հետ միասին ստորագրում և ծրարում է քննական տոմսերը և պատասխանատու է Հաստատությունում դրանց պահպանման համար,

3) ղեկավարում է քննության ընթացքը և պատասխանատու է քննության անցկացման և հանձնաժողովի աշխատանքի որակի համար,

4) պատասխանատու է քննական տոմսերի մեջ հայտնաբերված վրիպակները տեղում ուղղելու համար,

5) դիմորդներին բացատրում է քննության ընթացակարգը և ներկայացվող պահանջները,

6) ընտրողաբար ստուգում կամ վերստուգում է գրավոր աշխատանքները,

7) յուրաքանչյուր քննության ավարտից անմիջապես հետո ընդունող հանձնաժողովին է ներկայացնում քննությունների ամփոփ արդյունքները:

18. Ընդունող հանձնաժողովի լիազորությունները դադարում են ընդունելության մրցույթի վերջնական արդյունքների ամփոփման, իսկ քննական հանձնաժողովների լիազորությունները՝ համապատասխան քննությունների վերջնական արդյունքների ամփոփման օրվան հաջորդող 3-րդ օրվանից:

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

19. Դիմորդը՝ Հաստատության ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի) հետ ներկայացնում է՝

1) դիմում,

2) 4 լուսանկար (3x4 չափսի),

3) կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ պատճենը,

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, կամ ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան դիմորդի համար, կամ զինվորական գրքույկ, կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական),

5) կցագրման վկայական (գորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չգորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական գորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),

6) սույն կարգի 22-րդ կետով սահմանված՝ ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փաստաթուղթ (առկայության դեպքում), որը Հաստատության տնօրենը (ռեկտորը) ուսանողներին հրամանագրելուց հետո՝ 2-օրյա ժամկետում ներկայացնում է Լիազորված մարմին,

7) իր ընտրած մասնագիտության համար պահանջվածից ավելի բարձր կրթության ավարտական փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում), ինչպես նաև այդ մասնագիտությանը համապատաս-

խան՝ վարպետային ուսուցման որակավորման կամ կարճաժամկետ դասընթացի վկայականի պատճենը (ամկայության դեպքում),

8) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաների, փառատոների) դիպլոմները (ամկայության դեպքում),

9) պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար տվյալ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա հանձնած ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ փաստաթուղթը (ամկայության դեպքում),

10) տեղեկանք աշխատանքի վայրից (ամկայության դեպքում):

20. Դիմորդը Հաստատություն ընդունվելու համար կարող է դիմել մինչև 2 մասնագիտության հայտագրմամբ՝ մրցույթի առաջին հայտի գերակայության սկզբունքով, անվճար և վճարովի ուսուցման հիմունքով:

21. Դիմորդը՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով ընդունելության գործընթացի կազմակերպման և անցկացման համար, տվյալ Հաստատությունում նախապես վճարում է 1000 (հազար) ՀՀ դրամ: Անկախ մրցույթին մասնակցելուց և ընդունելության արդյունքից՝ վճարված գումարը դիմորդին հետ չի վերադարձվում: Սահմանված վճարներից ազատվում են սույն կարգի 22-րդ կետով նախատեսված արտոնություններ ունեցող դիմորդները, ինչպես նաև Հաստատության ընդունող հանձնաժողովի հայեցողությամբ՝ սոցիալական աջակցության կարիք ունեցող այլ դիմորդներ:

22. Ընդունելության մրցույթից դուրս, պահուստային տեղերի հաշվին ընդունվում են՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, «Ձինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապե-

տության կառավարության 1999 թվականի օգոստոսի 27-ի «Յայաստանի Յանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում դիմորդների ընդունելության արտոնությունները սահմանելու մասին» N 545 որոշման պահանջներին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան արտոնություններ ունեցող Դիմորդները:

5. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

23. Ընդունելության մրցույթն անցկացվում է ըստ մասնագիտությունների՝ տվյալ Յաստատությունում:

24. Ընդունելության մրցույթն անցկացվում է Լիազորված մարմնի կողմից ըստ մասնագիտությունների հատկացված անվճար և վճարովի ուսուցման տեղերում՝ հետևյալ սկզբունքով.

1) Անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար սույն կարգի ցանկով ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը.

2) Ոլորտային մասնագիտություններով անվճար տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և սույն կարգի ցանկերով (հավելված 1-ը կցվում է) տվյալ մասնագիտության քննության/քննությունների գնա-

հատականի(ների) ու տվյալ մասնագիտության համար ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը.

3) մրցութային հավասար միավորներ ունենալու դեպքում ըստ սահմանված հերթականության առավելությունը տրվում է՝

ա. մեդալակիր-դիմորդին.

բ. տվյալ մասնագիտությամբ առավել երկարատև մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող դիմորդին.

գ. պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար քննություններից առավել բարձր գնահատականներ ունեցող դիմորդին.

դ. տվյալ մասնագիտության գծով բարձրագույն կամ մասնագիտական կրթություն ստացած դիմորդին.

ե. դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդին.

զ. հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդրի գնահատականների առավելագույն միջին թվաբանական ունեցող դիմորդին.

է. ըստ տվյալ մասնագիտության համար սույն կարգի ընդունելության մրցութային առարկաների ցանկով սահմանված առաջնային համարվող առարկաներից առավել բարձր գնահատականներ/միավորներ ունեցած դիմորդին.

4) վճարովի ուսուցման տեղերը համալրվում են անվճար ուսուցման տեղերը համալրվելուց հետո՝ սույն կարգի 24-րդ կետի 1-ից 3-րդ ենթակետերով նախատեսված կարգով.

5) մրցույթը համարվում է ավարտված, Լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար Հաստատությանը հատկացված

տեղերը համալրվելու կամ դիմորդների թիվն այդ տեղերից պակաս լինելու դեպքում:

25. Թափուր տեղերի առկայության դեպքում մրցութային հիմունքով Հաստատություն կարող է ընդունվել ընթացիկ տարում այլ Հաստատություն մրցութով չանցած այն դիմորդը, ով մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 30-ը ներառյալ կներկայացնի սույն կարգի 19-րդ կետով պահանջված փաստաթղթերը:

26. Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար տվյալ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա հանձնած որևէ առարկայի ընդունելության քննության դրական գնահատականը, որը ներկայացվում է սահմանված ձևի տեղեկանքով, դիմորդի ցանկությամբ համարվում է Հաստատությունում տվյալ առարկայի ընդունելության մրցութային գնահատական:

27. Ավարտական փաստաթղթում <<Հայոց լեզու>> առարկայից գնահատական չունեցող դիմորդի համար <<Հայոց լեզու>> առարկան նրա ցանկությամբ փոխարինվում է որևէ <<Օտար լեզու>> առարկայով:

28. Ոլորտային մասնագիտություններով ընդունելության քննություններն անցկացնում են քննական հանձնաժողովները՝ Հաստատության տնօրենի (ռեկտորի) հաստատած ժամանակացույցի համաձայն: Ժամանակացույցը քննությունների սկզբից առնվազն մեկ շաբաթ առաջ փակցվում է Հաստատությունում՝ ի տես բոլորի, իսկ ժամանակացույցի պատճենը՝ հաստատումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան քննությունները սկսելուց մեկ շաբաթ առաջ, ներկայացվում է Լիազորված մարմնին:

29. Քննական տոմսերը կազմվում են Հաստատության քննական հանձնաժողովների կողմից՝ ընդունելության քննություններից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

30. Գրավոր առարկաների քննական տեքստերի քանակը պետք է լինի խմբերի թվից առնվազն 3-ով ավելի: Գրավոր քննությունների հարցատոմսերը պետք է կազմված լինեն այն հաշվարկով, որ յուրաքանչյուր քննական խմբի համար գործածության մեջ դրվի հարցատոմսի 4 տարբերակ պարունակող, նախապես կոմպլեկտավորված մեկ փաթեթ, իսկ վերջինիս ընտրությունը կատարվի առնվազն 3 փաթեթից:

31. Դիմորդն ընդունելության քննության է ներկայանում անձնագրով (մինչև 16 տարեկան դիմորդը՝ ծննդյան վկայականով, եթե անձնագիր չունի), կամ գինվորական գրքույկով, կամ ՀՀ ոստիկանության բաժինների կողմից տրված համապատասխան ձևով և քննական թերթիկով, որոնք ստուգվում են ընդունող հանձնաժողովի կողմից՝ Հաստատություն և քննասենյակ մտնելիս: Քննությունների ժամանակացույցով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին չի թույլատրվում մասնակցել հետագա քննություններին: Հարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին, ընդունող հանձնաժողովի որոշմամբ, հնարավորություն է տրվում այն հանձնել, եթե տվյալ առարկայի քննությունները Հաստատությունում չեն ավարտվել:

32. Յուրաքանչյուր քննական խմբում, որպես կանոն, ընդգրկվում է մինչև 30 դիմորդ: Բանավոր քննության դեպքում քննասենյակում միաժամանակ կարող է գտնվել ոչ ավելի, քան 5 դիմորդ:

33. Ընդունելության քննությունների օրերին Հաստատությունում և քննական սենյակում գտնվելու իրավունք ունեն.

1) Հաստատությունում՝ ընդունող հանձնաժողովի անդամները, տվյալ օրվա քննություններին մասնակցող դիմորդներն ու քննական հանձնաժողովի անդամները, սպասարկող տեխնիկական անձնակազմի անդամները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև Լիազորված մարմնի ներկայացուցիչները: Գրավոր քննության ընթացքին հետևելու նպատակով ընդունող հանձնաժողովի

Նախագահը կարող է հրավիրել դիմորդների ծնողներ, հասարակայնության ներկայացուցիչներ և լրագրողներ:

2) քննական սենյակում՝ քննական հանձնաժողովի անդամները, տվյալ օրվա քննություններին մասնակցող դիմորդները, ընդունող հանձնաժողովի նախագահը և տեղակալը, ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը և սպասարկող տեխնիկական անձնակազմի անդամները միայն ընդունող հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև Լիազորված մարմնի ներկայացուցիչները:

34. Արվեստի ոլորտի մասնագիտությունների քննությունների համար նախատեսվում է հետևյալ տևողությունը.

1) «Սոլֆեջիո» առարկայի գրավոր թելադրության համար՝ 25 րոպե, իսկ բանավոր քննությանը՝ յուրաքանչյուր դիմորդի նախապատրաստվելու և պատասխանելու համար մինչև 15-ական րոպե.

2) գեղարվեստի մասնագիտություններով՝

ա) գծանկար՝ մինչև 540 րոպե (3 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).

բ) գունանկար՝ մինչև 360 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).

գ) կոմպոզիցիա՝ մինչև 450 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 5 ակադեմիական ժամ).

դ) քանդակ՝ մինչև 360 րոպե (2 օր՝ յուրաքանչյուր օրը 4 ակադեմիական ժամ).

ե) քանդակի կոմպոզիցիա՝ մինչև 225 րոպե (1 օր՝ 5 ակադեմիական ժամ):

35. Ոլորտային մասնագիտություններով գրավոր քննական աշխատանքները (ներառյալ սևագրությունը) և բանավոր քննությունների ժամանակ դիմորդների նշումները կատարվում են Հաստատության

դրոշմակնքված թերթիկների վրա: Վերջիններս ենթակա են հաշվառման և մինչև քննական հանձնաժողովին հանձնելը պահվում են ընդունող հանձնաժողովի նախագահի մոտ:

36. Գրավոր քննական աշխատանքները, բանավոր քննությունների ժամանակ դիմորդներին տրված դրոշմակնքված թերթիկները, լրացված քննական տեղեկագրերը՝ քննական հանձնաժողովի նախագահը քննության ավարտից (գրավոր քննության դեպքում՝ աշխատանքների ստուգումից) անմիջապես հետո հանձնում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Յուրաքանչյուր քննության արդյունքները հաստատվում են ընդունող հանձնաժողովի նախագահի կողմից:

37. Գրավոր աշխատանքների ստուգումը կատարվում է Հաստատությունում, քննական հանձնաժողովի անդամների կողմից:

38. Ոլորտային մասնագիտություններով բանավոր քննությունների համար նախատեսվում է հետևյալ տևողությունը՝ յուրաքանչյուր դիմորդի նախապատրաստվելու համար մինչև 30 րոպե, իսկ պատասխանի համար մինչև 15 րոպե:

39. Ընդունելության քննությունները Ոլորտային մասնագիտություններով գնահատվում են 20 բալային համակարգով: Դրական են համարվում 8 և ավելի միավորները: 8 միավորից ցածր ստացած դիմորդը չի մասնակցում մրցույթին:

40. Քննությունների ժամանակացույցով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին չի թույլատրվում մասնակցել հետագա քննություններին: Հարգելի պատճառով քննությանը չներկայացած դիմորդին, ընդունող հանձնաժողովի որոշմամբ, հնարավորություն է տրվում այն հանձնել, եթե տվյալ առարկայի քննությունները Հաստատությունում չեն ավարտվել:

41. Հաստատության ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված քննությունների արդյունքների ցուցակները փակցվում են ի տես բոլորի ոչ ուշ, քան տվյալ քննության հաջորդ օրվա ժամը 12-ը:

42. Գրավոր քննության գնահատականը դիմորդը կարող է գրավոր բողոքարկել ընդունող հանձնաժողովի նախագահին՝ քննությունների արդյունքները հրապարակվելուց հետո՝ մինչև հաջորդ օրվա ժամը 12-ը: Դիմումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում քննական հանձնաժողովը՝

1) դիմորդի ներկայությամբ վերստուգում, քննարկում է բողոքարկված աշխատանքը.

2) պատճառաբանված մերժում է փոփոխել կամ փոփոխում է գնահատականը՝ այդ մասին տեղյակ պահելով դիմորդին:

43. Գնահատականը փոփոխելու դեպքում այն վավերացվում է քննական հանձնաժողովի նախագահի կողմից, որի համար քննական տեղեկագրում հանձնաժողովի նախագահը տվյալ դիմորդի հերթական համարը վերցնում է շրջանակի մեջ, դրա դիմաց կատարում է «Գնահատականը փոփոխված է» նշումը և ստորագրում: Փոփոխված գնահատականն անցկացվում է նոր տեղեկագրի մեջ: Համապատասխան փոփոխություն է կատարվում նաև դիմորդի քննական թերթիկում: Գնահատականների փոփոխությունն արձանագրվում է ընդունող հանձնաժողովի կողմից:

44. Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկել առանց քննասենյակից դուրս գալու՝ քննական հանձնաժողովի նախագահի ներկայությամբ: Բողոքի քննարկման արդյունքում Հանձնաժողովի նախագահը կարող է վերանայել բանավոր քննության գնահատականը:

45. Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո և 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունելության արդյունքները ներկայացվում է Լիազորված մարմնին:

6. ՈՒՍԱՆՈՂԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

46. Մրցույթով անցած յուրաքանչյուր դիմորդի համար կազմվում է անձնական գործ, որտեղ ընդգրկվում են սույն կարգի 19-րդ կետի 1-2 և 3-10 ենթակետերով նախատեսված փաստաթղթերը կամ փաստաթղթերի պատճենները, հիմնական կրթության վկայականի կամ միջնակարգ կրթության ատեստատի բնագիրը կամ նոտարական հաստատումով (վավերացված) պատճենը, իսկ առկայության դեպքում՝ նաև գրավոր քննական աշխատանքները, բողոքարկման դիմումները և դրանց վերաբերյալ որոշումները:

47. Ընդունող հանձնաժողովի համապատասխան որոշման և լրիվ ձևակերպված անձնական գործի հիման վրա Հաստատության տնօրենը մրցույթով անցած դիմորդներին 2 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է որպես ուսանող: Հրամանագրվածների ցուցակները հրապարակվում են ոչ ուշ, քան հրամանագրման հաջորդ օրը:

48. Թափուր տեղերի առկայության դեպքում մրցութային հիմունքով Հաստատություն կարող է ընդունվել ընթացիկ տարում այլ մասնագիտական ուսումնական հաստատություն մրցույթով չանցած այն դիմորդը, ով մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 31-ը ներառյալ կներկայացնի սույն կարգի 19-րդ կետով պահանջված փաստաթղթերը:

49. Հաստատության տնօրենը (ռեկտորը) հրամանագրված դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որտեղ պարտադիր ամրագրվում են ուսանողի ընտրած մասնագիտությունը, ուսուցման ձևը, սովորելու տարիների տևողությունը և Հաստատությունում ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների: Պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաժանված չափերը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

50. Ուսանողին հանձնվում է պայմանագրի երկրորդ օրինակը, ուսանողական տոմս և առաջադիմության գրքույկ:

51. Հաստատության ուսումնական խմբում ուսանողների թիվը սահմանվում է՝ առկա (ստացիոնար) ուսուցման համար մինչև 25, հեռակա ուսուցման համար՝ մինչև 20 մարդ:

52. Հաստատություն չընդունված դիմորդին վերադարձվում են սույն կարգի 19-րդ կետով պահանջված փաստաթղթերը, իսկ դրանց պատճենները, ինչպես նաև քննական աշխատանքները պահպանվում են Հաստատությունում 6 ամիս, ինչից հետո ոչնչացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

53. Ընդունելության հետ առնչվող կամ մրցույթի անցկացման ընթացքում ծագած հարցերը, որոնք չեն կանոնակարգվում սույն կարգով, կարգավորվում են ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

54. Սույն կարգի իրականացումը վերահսկում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Հավելված 1

ՀՀ կրթության և գիտության նախարարի

5 ապրիլի 2012 թ. N 254-Ն հրամանով

հաստատված կարգի

Ց Ա Ն Կ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ**

ԴԱՍԻՉԸ	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ	ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ		
		1	2	3
0514	Գեղարվեստական ձևավորման աշխատանքներ և դիզայն	Երկ.	Մ	Հլգ
0515	Չարդակիրառական արվեստ	Երկ.	Մ	Հլգ
0601	Հաշվետարություն	Մ	Հլգ	Օլ
0604	Բանկային գործ	Մ	Հլգ	Օլ
0605	Փաստաթղթավարություն, տեղեկատվական և կազմակերպչական սպասարկում	Հլգ	Օլ	Իր
0608	Առևտրական գործ	Մ	Հլգ	Օլ
0904	Օգտակար հանածոների հարստացում	Աշխ	Հլգ	Զ
1002	Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	Ֆ	Մ	Հլգ
1003	Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում	Ֆ	Մ	Հլգ

1007	Էլեկտրալուսավորման և ուժային սարքավորումների էլեկտրամոնտաժում	Ֆ	Մ	Հլգ
1105	Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ	Ֆ	Մ	Հլգ
1207	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա	Ֆ	Մ	Հլգ
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա	Ֆ	Մ	Հլգ
1706	Հիվանդի ընդհանուր խնամք	Կ	Ը	Հլգ
1903	Չափիչ-ստուգիչ սարքերի և ավտոմատիկայի տեխնիկական շահագործում	Ֆ	Մ	Հլգ
2003	Ռադիոէլեկտրոնային սարքավորումների և սարքերի արտադրության տեխնոլոգիա	Ֆ	Մ	Հլգ
2009	Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում	Ֆ	Մ	Հլգ
2014	Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում	Ֆ	Մ	Հլգ
2203	Համակարգիչների շահագործում	Մ	Ֆ	Հլգ
2204	Էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում	Մ	Ֆ	Հլգ
2304	Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում	Երկ.	Կ	Հլգ
2305	Լուսանկարչություն	Ֆ	Մ	Հլգ
2311	Հասարակական սնունդ	Կ	Ը	Հլգ
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների)	Մ	Ֆ	Հլգ
2402	Ավտոմատիկան, հեռուստամեխանիկան և կապը երկաթուղային տրանսպորտում	Ֆ	Մ	Հլգ
2406	Երկաթուղու և գծային տնտեսության շահագործում	Մ	Ֆ	Հլգ
2512	Զբոմիական արտադրության տեխնոլոգիա	Ը	Կ	Հլգ

2704	Գինեգործություն և հյուրերի արտադրություն	Կ	Ք	Հլգ
2802	Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա	Ք	Մ	Հլգ
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա	Մ	Ք	Հլգ
2901	Վերամբարձ-տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործում	Մ	Ֆ	Հլգ
2907	Ատաղծագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ	Երկ.	Մ	Հլգ
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում	Երկ.	Մ	Հլգ
2915	Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում	Ֆ	Մ	Հլգ
3106	Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում	Ֆ	Մ	Հլգ
3112	Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում	Կ	Մ	Հլգ
3404	Լաբորատոր հետազոտություններ և չափումներ արտադրությունում (ըստ ուղղությունների)	Ք	Մ	Հլգ

Օ գ տ ա գ ո Ր Ծ Վ ա Ծ հ ա պ ա վ ու մ ն ե Ր

<i>Հլգ-</i>	<i>Ֆ ՎՆ Ֆիզիկա</i>	<i>Իր ՎՆ Իրավունք</i>
<i>Հայոց լեզու և գրականություն</i>	<i>Ք - Քիմիա</i>	<i>Աշխ -</i>
<i>Օլ ՎՆ Օտար լեզու</i>	<i>Կ ՎՆ</i>	<i>Աշխարհագրություն</i>
<i>Մ ՎՆ Մաթեմատիկա</i>	<i>Կենսաբանություն</i>	<i>Երկ ՎՆ</i>
		<i>Երկրաչափություն</i>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԴՈՒՄԵԼՈՒԹՅԱՆ ԸՆՆԱԿԱՆ ԵՎ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ**

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ	ԸՆԴՈՒՄԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ			ԸՆԴՈՒՄԵԼՈՒ- ԹՅԱՆ ԸՆՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ		
	1	2	3	1	2	3
0201 Իրավագիտություն	Հա	Հլգ	Օլ			
0202 Սոցիալական ապահովության կազմակերպում	Հա	Հլգ	Օլ			
0205 Սոցիալական աշխատանք	Հա	Հլգ	Օլ			
0206 Հրատարակչական գործ	Հլգ	Հա	Օլ			
0207 Թարգմանություն և գործավարություն	Օլ	Հլգ	Հա			
0208 Թարգմանություն և մաքսավարություն	Օլ	Հլգ	Մ			
0209 Թարգմանություն և արխիվավարություն	Օլ	Հլգ	Հա			
0210 Թարգմանություն և սպասարկման կազմակերպում	Օլ	Հլգ	Հա			
0301 Հայոց և օտար լեզուների դասավանդում	Հլգ	Օլ	Մ			
0302 Հայոց լեզվի դասավանդում	Հլգ	Հլ	Մ			
0303 Ռուսաց լեզվի դասավանդում	Ռլ	Հլգ	Օլ			
0304 Օտար լեզվի դասավանդում	Օլ	Հլգ	Մ			
0307 Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	Հլգ			Ֆիզ		

0308 Մասնագիտական ուսուցում (ըստ ճյուղերի)	Մ	Հլգ	Հպ			
0310 Երաժշտական կրթություն	Հլգ			Մասն	Սուլֆ	
0312 Դասավանդում տարրական դասարաններում	Հլգ	Մ	Հպ			
0313 Նախադպրոցական կրթություն	Հլգ	Մ	Հպ			
0314 Հատուկ նախադպրոցական կրթություն	Հլգ	Մ	Հպ			
0317 Սոցիալական մանկավարժություն	Հլգ	Մ	Հպ			
0319 Պարի ուսուցում	Հլգ			Մասն		
0401 Բուժական գործ	Հլգ			Կ		
0402 Մանկաբարձական գործ	Հլգ			Կ		
0403 Բուժկանխարգելման գործ	Հլգ			Կ		
0404 Բժշկական օպտիկա	Հլգ			Ֆ		
0405 Դեղագործություն	Հլգ			Կ		
0406 Զույրական գործ	Հլգ			Կ		
0407 Լաբորատոր ախտորոշում	Հլգ			Ք		
0408 Լաբորատոր գործ	Հլգ			Կ		
0410 Բուժական կոսմետոլոգիա	Հլգ			Կ		
0411 Բուժական մերսում	Հլգ			Կ		
0415 Զույրական գործի կազմակերպում	Հլգ			Կ		
0416 Ատամնատեխնիկական գործ	Հլգ			Կ		
0501 Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների)	Հլգ			Մասն	Սուլֆ	
0502 Երգեցողություն	Հլգ			Մասն1	Մասն2	
0503 Երգչախմբավարություն	Հլգ			Սուլֆ	Դշն	

0504 Երաժշտության տեսություն	Հլգ			Սոլֆ	Եգ	Դշն
0505 Եստրադայի երաժշտարվեստ	Հլգ			Մասն	Սոլֆ	
0506 Պարարվեստ	Հլգ			Մասն		
0507 Դերասանական արվեստ	Հլգ			Մասն		
0508 Կրկեսային արվեստ	Հլգ			Մասն		
0509 Ռեժիսուրա (ըստ տեսակների)	Հլգ			Մասն		
0511 Եստրադային արվեստ	Հլգ			Մասն		
0512 Գեղանկարչություն	Հլգ			Գծն	Գևն	Կոմ
0513 Զանդակագործություն	Հլգ			Գծն	Զևդ	Կոմ
0514 Դիզայն (ըստ ճյուղերի)	Հլգ			Գծն	Գևն	Կոմ
0515 Չարդային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ	Հլգ			Գծն	Գևն	Կոմ
0516 Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում	Հլգ			Մասն		
0517 Գրադարանային գործ	Հլգ	Հպ	Օլ			
0518 Սոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն	Հլգ			Մասն		
0520 Լուսային ռեժիսուրա	Հլգ			Մասն		
0601 Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի)	Մ	Հլգ	Օլ			
0602 Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի)	Մ	Հլգ	Օլ			
0603 Ֆինանսներ (ըստ ճյուղերի)	Մ	Հլգ	Օլ			
0604 Բանկային գործ	Մ	Հլգ	Օլ			
0606 Ապահովագրական գործ (ըստ ճյուղերի)	Մ	Հլգ	Օլ			
0607 Շուկայաբանություն (ըստ ճյուղերի)	Մ	Հլգ	Օլ			

0608 Առևտուր (ըստ ճյուղերի)	Մ	Հլգ	Օլ			
0612 Ապրանքագիտություն (ըստ համասեռ ապրանքների խմբերի)	Մ	Հլգ	Օլ			
0613 Հողային ռեսուրսների կառավարում	Մ	Հլգ	Օլ			
0801 Երկրաբանական հանույթ, օգտակար հանածոների հանքավայրերի որոնում և հետախուզում	Մ	Ք	Հլգ			
0804 Օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզման տեխնոլոգիա և տեխնիկա	Մ	Ք	Հլգ			
0902 Բաց լեռնային աշխատանքներ	Մ	Ք	Հլգ			
0903 Օգտակար հանածոների հանքավայրերի ստորերկրյա շահագործում	Մ	Ք	Հլգ			
0904 Օգտակար հանածոների հարստացում	Մ	Ք	Հլգ			
0908 Հանքահորային և ստորերկրյա շինարարություն	Մ	Ֆ	Հլգ			
1001 Էլեկտրական կայաններ, ցանցեր և համակարգեր	Ֆ	Մ	Հլգ			
1002 Էլեկտրահաղորդման գծերի տեղակայում և շահագործում	Ֆ	Մ	Հլգ			
1004 Էլեկտրամատակարարում (ըստ ճյուղերի)	Ֆ	Մ	Հլգ			
1005 Ջերմաէլեկտրակայաններ	Ֆ	Մ	Հլգ			
1006 Ջերմամատակարարում և ջերմատեխնիկական սարքավորումներ	Ֆ	Մ	Հլգ			
1007 Ատոմային և միջուկային էներգետիկական կայանքներ	Ֆ	Մ	Հլգ			
1101 Սև մետաղների մետաղագոր-	Մ	Ֆ	Հլգ			

ծութիւն						
1102 Գունավոր մետաղների մետաղագործություն	Մ	Ֆ	ՀԼԳ			
1103 Սև և գունավոր մետաղների ձուլման արտադրություն	Ֆ	Ք	ՀԼԳ			
1104 Մետաղագիտություն և մետաղների ջերմային մշակում	Ֆ	Ք	ՀԼԳ			
1105 Մետաղների ճնշամշակում	Ֆ	Մ	ՀԼԳ			
1106 Փոշեմետաղագործություն, կոմպոզիցիոն նյութեր, ծածկույթներ	Ֆ	Ք	ՀԼԳ			
1107 Մետաղների և եռակցումների որակի հսկում	Ֆ	Ք	ՀԼԳ			
1201 Մեքենաշինության տեխնոլոգիա	Ֆ	Մ	ՀԼԳ			
1202 Թռչող ապարատների արտադրություն	Ֆ	Մ	ՀԼԳ			
1203 Ավիացիոն շարժիչների արտադրություն	Ֆ	Մ	ՀԼԳ			
1205 Ավտոմոբիլաշինություն և տրակտորաշինություն	Ֆ	Մ	ՀԼԳ			
1206 Երկաթուղիների շարժակազմի արտադրություն	Ֆ	Մ	ՀԼԳ			
1207 Եռակցման արտադրություն	Ֆ	Մ	ՀԼԳ			
1208 Հղկիչ և ալմաստ գործիքներ	Ֆ	Մ	ՀԼԳ			
1209 Հատուկ մեքենաներ և սարքեր	Ֆ	Մ	ՀԼԳ			
1210 Իրերի արտադրություն ավտոմատ ռոտորային և ռոտորային-հոսքային գծերի վրա	Ֆ	Մ	ՀԼԳ			
1211 Հաստոցաշինություն	Մ	Ֆ	ՀԼԳ			
1701 Արդյունաբերական սարքավորում	Մ	Ֆ	ՀԼԳ			

րումների տեղակայում և տեխնիկական շահագործում (ըստ ճյուղերի)						
1703 Թռչող ապարատների և ավիաշարժիչների տեխնիկական շահագործում	Ֆ	Մ	ՅԼԳ			
1704 Տրանսպորտային էներգետիկ սարքերի շահագործում (ըստ տրանսպորտի տեսակների)	Ֆ	Մ	ՅԼԳ			
1705 Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում	Մ	Ֆ	ՅԼԳ			
1706 Վերամբարձ տրանսպորտային, շինարարական, ճանապարհային մեքենաների և սարքավորումների շահագործում	Մ	Ֆ	ՅԼԳ			
1707 Երկաթուղային շարժակազմի տեխնիկական շահագործում	Մ	Ֆ	ՅԼԳ			
1708 Էլեկտրոնային տեխնիկայի արտադրության համար կիրառվող սարքավորումների տեխնիկական շահագործում	Ֆ	Մ	ՅԼԳ			
1710 Սարքավորումների տեխնիկական շահագործում առևտրում և հանրային սննդում	Մ	Ֆ	ՅԼԳ			
1715 Բժշկական տեխնիկայի տեղակայում, տեխնիկական սպասարկում և նորոգում	Մ	Ֆ	ՅԼԳ			
1716 Հաստոցների շահագործում և սպասարկում	Մ	Ֆ	ՅԼԳ			
1719 Օդային տրանսպորտի երթևեկ	Մ	Ֆ	ՅԼԳ			

կուռքան կառավարում						
1720 Թռչող ապարատների թռիչքային շահագործում	Մ	\$	Հլգ			
1721 Թռչող ապարատների սպասարկում վառելիքաքսուքային նյութերով	Մ	\$	Հլգ			
1723 Երկաթուղու էլեկտրաքարշի տեխնիկական շահագործում	Մ	\$	Հլգ			
1801 Էլեկտրական մեքենաներ և ապարատներ	\$	Մ	Հլգ			
1802 Էլեկտրամեկուսիչ, մալուխային և խտարարման տեխնիկա	\$	Մ	Հլգ			
1803 Լուսատեխնիկա և լույսի աղբյուրներ	\$	Մ	Հլգ			
1804 Տրանսպորտային էլեկտրասարքավորումների և ավտոմատիկայի շահագործում (ըստ տրանսպորտի տեսակների)	\$	Մ	Հլգ			
1805 Էլեկտրատեխնիկական սարքեր	\$	Մ	Հլգ			
1806 Էլեկտրական և էլեկտրամեխանիկական սարքավորումների տեխնիկական շահագործում և սպասարկում (ըստ ճյուղերի)	\$	Մ	Հլգ			
1808 Էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ	\$	Մ	Հլգ			
1901 Սարքաշինություն	Մ	\$	Հլգ			
1902 Որակի հսկման և ախտորոշման սարքեր	\$	Մ	Հլգ			
1910 Ռադիոէլեկտրոնային գործիքային սարքեր	\$	Մ	Հլգ			

1911 Էլեկտրամեխանիկական գործիքային սարքեր	Ֆ	Մ	ՅԼԳ			
1913 Չափագիտություն	Մ	Ֆ	ՅԼԳ			
2001 Միկրոէլեկտրոնիկա և պինդ-մարմնային միկրոէլեկտրոնիկա	Ֆ	Մ	ՅԼԳ			
2002 Էլեկտրոնային սարքեր և սարքավորումներ	Ֆ	Մ	ՅԼԳ			
2003 Ռադիոսարքաշինություն	Ֆ	Մ	ՅԼԳ			
2004 Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր	Ֆ	Մ	ՅԼԳ			
2005 Բազմուղի հեռուստահաղորդակցման համակարգեր	Ֆ	Մ	ՅԼԳ			
2006 Ռադիոկապ, ռադիոհաղորդում և հեռուստատեսություն	Ֆ	Մ	ՅԼԳ			
2007 Էլեկտրավորված և օդանավարկման համալիրների տեխնիկական շահագործում	Ֆ	Մ	ՅԼԳ			
2008 Օդերևութաբանական ռադիոտեխնիկական համակարգերի շահագործում	Ֆ	Մ	ՅԼԳ			
2009 Կապի միջոցների շահագործում	Ֆ	Մ	ՅԼԳ			
2010 Տրանսպորտային ռադիոէլեկտրոնային սարքավորումների տեխնիկական շահագործում (ըստ տրանսպորտի տեսակների)	Ֆ	Մ	ՅԼԳ			
2013 Լսատեսողական տեխնիկա և լսատեսողական ծրագրերի ձայնատեխնիկական ապահովում	Ֆ	Մ	ՅԼԳ			
2014 Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և	Ֆ	Մ	ՅԼԳ			

Նորոգում (ըստ ճյուղերի)						
2015 Փոստային կապ	Մ	ՕԼ	ՀԼԳ			
2019 Կինոսարքավորումների և տեսատեխնիկայի շահագործում	Ֆ	Մ	ՀԼԳ			
2020 Հնչյունային տեխնիկայի սպասարկում	Ֆ	Մ	ՀԼԳ			
2101 Տեխնոլոգիական գործընթացների և արտադրությունների ավտոմատացում (ըստ ճյուղերի)	Ֆ	Մ	ՀԼԳ			
2102 Էլեկտրաէներգետիկական համակարգերի ռելեային պաշտպանություն և ավտոմատացում	Ֆ	Մ	ՀԼԳ			
2103 Ավտոմատիկական, հեռուստամեխանիկական և կապը տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)	Ֆ	Մ	ՀԼԳ			
2104 Կառավարման ավտոմատ համակարգեր	Ֆ	Մ	ՀԼԳ			
2105 Ձերմաէլեկտրակայանների տեխնոլոգիական գործընթացների ավտոմատացում	Ֆ	Մ	ՀԼԳ			
2106 Էլեկտրաէներգետիկական գործավարական կառավարման համակարգեր և միջոցներ	Ֆ	Մ	ՀԼԳ			
2107 Մեքենայացման և ավտոմատացման միջոցներ (ըստ ճյուղերի)	Մ	Ֆ	ՀԼԳ			
2108 Որակի կառավարում	Մ	Ֆ	ՀԼԳ			
2201 Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր	Մ	Ֆ	ՀԼԳ			
2202 Տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված	Մ	Ֆ	ՀԼԳ			

համակարգեր (ըստ ճյուղերի)						
2203 Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	Մ	Ֆ	Հլգ			
2204 Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում	Մ	Ֆ	Հլգ			
2205 Կիրառական ինֆորմատիկա (ըստ ճյուղերի)	Մ	Ֆ	Հլգ			
2206 Մեխատրոնիկա	Մ	Ֆ	Հլգ			
2301 Սպասարկման կազմակերպում	Մ	Հլգ	Օլ			
2302 Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում	Հպ	Հլգ	Օլ			
2303 Իրերի քիմիական մշակման սպասարկում	Ք	Մ	Հլգ			
2304 Վարսավիրական արվեստ	Հլգ	Կ				
2305 Լուսանկարչական գործ	Ֆ	Մ	Հլգ			
2307 Չբոսաշրջություն	Հպ	Օլ	Հլգ			
2308 Գովազդ	Հլգ	Օլ	Հպ			
2311 Հասարակական մենեջի սպասարկման կազմակերպում	Մ	Հլգ	Օլ			
2312 Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	Ք	Կ	Հլգ			
2315 Սպասարկում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)	Մ	Հլգ	Օլ			
2401 Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)	Մ	Ֆ	Հլգ			
2402 Օդային տրանսպորտի	Մ	Ֆ	Հլգ			

երթևեկության կառավարում						
2403 Թռչող ապարատների թռիչքային շահագործում	Մ	\$	Հլգ			
2404 Թռչող ապարատների սպասարկում վառելիքաքսուքային նյութերով	Ք	\$	Հլգ			
2409 Տրանսպորտային էներգետիկական կայանքների շահագործում (ըստ տրանսպորտի տեսակների)	\$	Մ	Հլգ			
2410 Թռչող հարմարանքների և շարժիչների տեխնիկական շահագործում	\$	Մ	Հլգ			
2411 Էլեկտրաֆիկացված և օդաչուաօդանավային համալիրի տեխնիկական շահագործում	\$	Մ	Հլգ			
2412 Երկաթուղային շարժակազմի տեխնիկական շահագործում	\$	Մ	Հլգ			
2413 Տրանսպորտային էլեկտրասարքավորումների և ավտոմատիկայի շահագործում ըստ տրանսպորտի տեսակների	\$	Մ	Հլգ			
2414 Տրանսպորտային էներգետիկ սարքերի շահագործում	\$	Մ	Հլգ			
2415 Օդային տրանսպորտի շահագործում	Մ	\$	Հլգ			
2501 Օրգանական նյութերի քիմիական տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2502 Անօրգանական նյութերի քիմիական տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2503 Էլեկտրաքիմիական արտա-	Ք	\$	Հլգ			

դրություն						
2504 Կոքսաքիմիական արտադրություն	Ք	Կ	ՅԼԳ			
2505 Նավթի և գազի վերամշակում	Ք	Կ	ՅԼԳ			
2506 Պոլիմերային նյութերից պատրաստվող իրերի և ծածկույթների արտադրություն	Ք	Կ	ՅԼԳ			
2507 Կինոլուսանկարչանյութերի և մագնիսական կրիչների տեխնոլոգիա	Ֆ	Ք	ՅԼԳ			
2508 Սիլիկատային և դժվարահալ ոչ մետաղական նյութերի և իրերի արտադրություն	Ք	Ֆ	ՅԼԳ			
2509 Կենսաքիմիական արտադրություն	Ք	Կ	ՅԼԳ			
2510 Երկրորդական հումքի վերամշակում	Ք	Կ	ՅԼԳ			
2512 Հրատեխնիկական միացությունների և իրերի տեխնոլոգիա	Ք	Կ	ՅԼԳ			
2514 Զիմիական միացությունների որակի անալիտիկ հսկում	Ք	Մ	ՅԼԳ			
2515 Վերամշակման արտադրության քիմիական տեխնոլոգիա	Ք	Կ	ՅԼԳ			
2601 Փայտամթերման տեխնոլոգիա	Ք	Մ	ՅԼԳ			
2602 Փայտամշակման տեխնոլոգիա	Ք	Մ	ՅԼԳ			
2603 Փայտանյութի վերամշակման տեխնոլոգիա	Ք	Մ	ՅԼԳ			
2604 Անտառային և անտառապուրակային տնտեսություն	Կ	Մ	ՅԼԳ			
2605 Պարտեզապուրակային և երկրապատկերային շինարարություն	Մ	Կ	ՅԼԳ			

2701 Հացահատիկի պահպանման և վերամշակման տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2702 Հացաթխման, մակարոնային և հրուշակեղենի տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2703 Քաղցրավենիքի տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2704 Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն	Ք	Կ	Հլգ			
2706 Ճարպերի և ճարպափոխարինիչների տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2707 Պահածոների և սննդախտակյութերի տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2708 Մսի և մսամթերքների տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2709 Ձկան և ձկնամթերքի տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2710 Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2711 Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2802 Մանրաթելային նյութերի նախնական վերամշակում	Ք	Կ	Հլգ			
2807 Մանվածքային իրերի տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2808 Հագուստի մոդելավորում և նախագծում	Հլգ			Գծն		
2809 Հագուստի պատրաստման տեխնոլոգիա	Մ	Կ	Հլգ			
2810 Կաշվի և մորթու տեխնոլոգիա	Ք	Կ	Հլգ			
2811 Կաշվե իրերի արտադրություն	Ք	Կ	Հլգ			
2813 Թղթե և ստվարաթղթե իրերի	Մ	Ք	Հլգ			

արտադրություն						
2814 Պոլիգրաֆիական արտադրություն	Մ	Ֆ	Հլգ			
2815 Նվագարանների արտադրություն	Մ	Ֆ	Հլգ			
2816 Խաղալիքների գեղարվեստական նախագծում, մոդելավորում և ձևավորում	Հլգ			Գծն		
2817 Մորթե արտադրանքի մոդելավորում և նախագծում	Հլգ			Գծն		
2818 Կաշվե արտադրանքի մոդելավորում և նախագծում	Հլգ			Գծն		
2819 Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն	Մ	Ը	Հլգ			
2901 Ճարտապետություն	Մ	Ֆ	Հլգ			
2902 Շենքերի և կառույցների շինարարություն ու շահագործում	Մ	Ֆ	Հլգ			
2903 Քաղաքային հաղորդակցության ուղիների շինարարություն և շահագործում	Մ	Ֆ	Հլգ			
2904 Երկաթուղիների շինարարություն, երկաթգիծ և գծային տնտեսություն	Մ	Ֆ	Հլգ			
2905 Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն ու շահագործում	Մ	Ֆ	Հլգ			
2906 Հիդրոտեխնիկական շինարարություն	Մ	Ֆ	Հլգ			
2907 Թունեղների և մետրոպոլիտենների շինարարություն	Մ	Ֆ	Հլգ			

2908 Կամուրջների շինարարություն	Մ	Ֆ	Հլգ			
2909 Ոչ մետաղական շինարարական իրերի և կոնստրուկցիաների արտադրություն	Մ	Ֆ	Հլգ			
2910 Մետաղական կոնստրուկցիաների պատրաստում	Մ	Ֆ	Հլգ			
2911 Արդյունաբերական սարքավորումների տեղակայում	Մ	Ֆ	Հլգ			
2912 Ջրամատակարարում և ջրահեռացում	Մ	Ֆ	Հլգ			
2913 Արդյունաբերական և քաղաքացիական շենքերի էլեկտրական սարքավորումների տեղակայում, կարգավորում ու շահագործում	Ֆ	Մ	Հլգ			
2914 Ներքին ջեռուցման և օդափոխման համակարգերի սանիտարատեխնիկական սարքավորումների ու օդափոխման համակարգերի տեղակայում և շահագործում	Մ	Ֆ	Հլգ			
2915 Գազամատակարարման սարքավորումների և համակարգերի տեղակայում ու շահագործում	Մ	Ֆ	Հլգ			
2916 Զաղաքաշինական կադաստր	Մ	Ֆ	Հլգ			
2917 Հանքահորային շինարարություն	Մ	Ֆ	Հլգ			
3001 Կիրառական գեոդեզիա	Մ	Ֆ	Հլգ			
3002 Աերոֆոտոգեոդեզիա	Մ	Ֆ	Հլգ			
3101 Հողաշինարարություն	Մ	Ֆ	Հլգ			
3102 Գյուղատնտեսագիտություն	Ք	Կ	Հլգ			
3103 Անասնաբուծություն	Ք	Կ	Հլգ			
3104 Անասնաբուծություն	Ք	Կ	Հլգ			

3105 Մեղվաբուծություն	Ք	Կ	Հլգ			
3106 Գյուղատնտեսության մեքենայացում	Մ	Ֆ	Հլգ			
3107 Գյուղատնտեսության էլեկտրաֆիկացում և ավտոմատացում	Ֆ	Մ	Հլգ			
3108 Բուսաբուծական արտադրանքի պահպանում և վերամշակում	Ք	Կ	Հլգ			
3109 Ձկնաբանություն և ձկնաբուծություն	Կ	Ք	Հլգ			
3110 Արդյունաբերական ձկնորսություն	Կ	Ք	Հլգ			
3111 Որսագիտություն և գազանաբուծություն	Կ	Ք	Հլգ			
3112 Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում	Կ	Մ	Հլգ			
3114 Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում և նորոգում	Մ	Ֆ	Հլգ			
3201 Հրդեհային անվտանգություն	Ք	Ֆ	Հլգ			
3202 Հրշեջ-փրկարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում	Մ	Ֆ	Հլգ			
3203 Կառավարում արտակարգ իրավիճակներում	Մ	Ֆ	Հլգ			
3204 Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում	Ք	Կ	Հլգ			
3205 Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանություն	Մ	Կ	Հլգ			

3207 Վայրի բույսերի վերարտադրություն, հավաք և մթերում	Կ	Ք	Հլգ			
3208 Վայրի կենդանիների վերարտադրություն	Կ	Ք	Հլգ			
3401 Չափագիտություն	Մ	Ֆ	Հլգ			
3404 Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում)՝ ըստ ճյուղերի	Ք	Մ	Հլգ			
3405 Մետաղների և եռակցված միացությունների որակի հսկում	Ք	Ֆ	Հլգ			
3406 Դոզաչափություն և ճառագայթապաշտպանություն	Ք	Ֆ	Հլգ			
3407 Շինարարական արտադրության որակի հսկում	Մ	Ֆ	Հլգ			
3408 Շինարարական իրերի և կոնստրուկցիաների որակի հսկում	Մ	Ֆ	Հլգ			

1. Մրցութային առարկայի գնահատական/միավոր է համարվում հիմնական կրթության վկայականի որակավորման, միջնակարգ կրթության ատեստատի պետական ավարտական քննություններից ստացած համապատասխան առարկայի միավորը, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի քննական գնահատականը:

Եթե առարկան քննական չէ, ապա մրցութային առարկայի գնահատական/միավոր է համարվում հիմնական կրթության վկայականի կամ միջնակարգ կրթության ատեստատի համապատասխան առարկայի առաջադիմության միավորը:

2. Հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի քննական միավորների միջին թվաբանական կամ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մաս-

Նագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականը հաշվարկելիս անհրաժեշտ է անցնել 20-միավորային համակարգի՝ օգտվելով ներքոնշյալ սանդղակներից:

1) Գնահատման 5-միավորային համակարգից 20-միավորային համակարգի անցման համար կիրառվում է հետևյալ սանդղակը.

5-միավորային համակարգ	20-միավորային համակարգ
«5»	«20»
«4»	«17»
«3»	«13»

2) Գնահատման 10-միավորային համակարգից 20-միավորային համակարգի անցման համար կիրառվում է հետևյալ սանդղակը.

10-միավորային համակարգ	20-միավորային համակարգ
«10»	«20»
«9»	«18»
«8»	«16»
«7»	«14»
«6»	«12»
«5»	«10»
«4»	«8»

3. Հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականը հաշվելիս այն կլորացվում է տասնորդականի ճշտությամբ:

**ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

2006 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի N 997-Ն հրամանով հաստատվեց «Հայաստանի Հանրապետության պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը», որի միջոցով սահմանվում է ակադեմիական արձակուրդի տրամադրման հիմքը, ակադեմիական արձակուրդից վերադարձող ուսանողների կարգավիճակը, ինչպես նաև այլ հարաբերություններ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն**

*N 997-Ն
22 դեկտեմբերի 2006 թ.
ք. Երևան*

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՆԱԽՆԱԿԱՆ, ՄԻՋԻՆ,
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ (ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻՆ) ԵՎ
ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը»:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ռ. Գասպարյան)՝ սահման-

ված կարգով «ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը» ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա.Ավետիսյանին:

**ՀՀ կրթության և գիտության
նախարար՝**

Լ. Մկրտչյան

*Հաստատված է՝
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2006 թ. դեկտեմբերի 22-ի
N 997-Ն հրամանով*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ
ՆԱԽՆԱԿԱՆ, ՄԻՋԻՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ (ՄԱԳԻՍՏՐԱՆՆԵՐԻՆ) ԵՎ ԱՍՊԻՐԱՆՆԵՐԻՆ
ԱԿԱՂԵՄԻԱԿԱՆ ԱՐԾԱԿՈՒՐԴ ՏԱԼՈՒ ԿԱՐԳ**

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը և պայմանները:

2. Ակադեմիական արձակուրդ տրվում է նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառող սովորողներին, ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին՝ ըստ բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության:

3. Ակադեմիական արձակուրդի տևողությունը մեկ օրացուցային տարի է, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

4. Ակադեմիական արձակուրդ տալու մասին որոշումը կայացնում է ուսումնական հաստատության ղեկավարը (պետը, տնօրենը, ռեկտորը): Հրամանագրման համար հիմք է ծառայում.

- ըստ բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության՝ սովորողի, ուսանողի (մագիստրանտի) և ասպիրանտի դիմումը և պետա-

կան առողջապահական հիմնարկի բժշկափորձագիտական հանձնա-
ժողովի եզրակացությունը:

5. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման
վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող սովորողները, ուսանողները (մագիստրանտները) և ասպիրանտները ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվում են ուսուցման նույն համակարգում:

Վճարովի ուսուցմամբ ուսումնառող և ակադեմիական արձակուրդում գտնվող սովորողի, ուսանողի (մագիստրանտի) և ասպիրանտի կրթաթոշակ ստանալու կամ լրացուցիչ վճարումներ կատարելու պայմանները որոշվում է ուսումնական հաստատության և ուսանողի (մագիստրանտի) և ասպիրանտի միջև կնքված պայմանագրի համաձայն:

6. Ակադեմիական արձակուրդում գտնվող սովորողին, ուսանողին (մագիստրանտին) և ասպիրանտին հանրակացարան տրամադրելու հարցը լուծվում է՝ համաձայն ուսումնական հաստատության կանոնադրության:

7. Կրթաթոշակներով ուսումնառող օտարերկրյա սովորողին, ուսանողին (մագիստրանտին) և ասպիրանտին ակադեմիական արձակուրդ տալու կարգը և պայմանները որոշվում են՝ համաձայն այդ երկրի հետ կնքած միջպետական համաձայնագրերի և պայմանագրերի:

8. Ակադեմիական արձակուրդ կարելի է տալ նաև այն ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին, ովքեր համաձայն Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հետ կնքած միջպետական պայմանագրերի և համաձայնագրերի կամ ՀՀ կրթության և գիտության նախարարության և այդ պետությունների կրթության կառավարման պետական մարմինների հետ կնքած համաձայնագրերի՝ մրցույթի կամ դրամաշնորհի շահման արդյունքով հրավիրված են այդ երկրների համապատասխան ուսումնական հաստա-

տություններում ուսումը շարունակելու, որակավորումը բարձրացնելու կամ համատեղ հետազոտություններ կատարելու նպատակով:

9. Ըստ բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության ակադեմիական արձակուրդում գտնվող սովորողին, ուսանողին (մագիստրանտին) և ասպիրանտին ուսումնական գործընթացին թույլատրելու համար հիմք են ծառայում ուսանողի (մագիստրանտի) և ասպիրանտի դիմումը, պետական առողջապահական բժշկասոցիալական փորձաքննության եզրակացությունը, համաձայն որոնց ուսումնական հաստատության ղեկավարը (պետը, տնօրենը, ռեկտորը) հրամանով թույլ է տալիս ուսանողին (մագիստրանտին) և ասպիրանտին շարունակելու ուսումը:

10. Ակադեմիական արձակուրդի ժամկետը լրանալու դեպքում, 10-օրյա ժամկետում, անհարգելի պատճառով չներկայանալու պարագայում ուսանողը ենթակա է բուհից հեռացման:

11. Ակադեմիական արձակուրդի դեպքում արական սեռի ուսանողները չեն կորցնում պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը:

12. Ուսումնառության ժամանակահատվածում ուսանողը կարող է ձևակերպել ակադեմիական արձակուրդ ոչ ավելի, քան մեկ անգամ:

13. Ակադեմիական արձակուրդից վերադարձող ուսանողի կարգավիճակը (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի)) մնում է նույնը:

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՆՄՍԿ ԶԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Մինչև 2014 թվականը, միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրվում էր Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի N297-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգով»:

2013 թվականին, համաձայն 2011 թվականի փետրվարի 28-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով հաստատված «Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-52-Ն ՀՀ օրենքի, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման տրամադրում, գրեթե ամբողջությամբ վերանայվեց նպաստ և կրթաթոշակ տրամադրելու կարգը:

Կարգում ամրագրվեց նոր դրույթներ և սկզբունքներ, դրանցից են.

1. նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում և պետական կրթաթոշակի տրամադրում,

2. միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում փոխատեղումների՝ տարին մեկ անգամը փոխարինվեց կիսամյակի:

3. պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում մրցութային հիմունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2013 թվականի N 1330 - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ (ԿԱՄ) ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N
297-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին և 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին համապատասխան, ինչպես նաև ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N 297-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ (ԿԱՄ) ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԹՈՇՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ**

I. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակիորեն) ուսանողի ուսման վճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով ուսումնական հաստատությունների համար նախատեսված

միջոցների սահմաններում, ըստ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների, սահմանում է պետության կողմից տրվող՝ ուսանողական նպաստ ստացող ուսանողների թիվը, որը պահպանվում է ամբողջ ուսումնառության ընթացքում:

4. Պետության կողմից ուսանողական նպաստ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ հատկացնելու մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

5. Ուսանողական նպաստի տրամադրման գործառույթն իրականացնում է ուսումնական հաստատությունը:

6. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում մրցութային հիմունքով տրամադրում է՝

1) առաջին կիսամյակում՝ պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար ուսման վարձի փոխհատուցման տեղում, ընդունելության կարգով միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված ուսանողին, հաջորդ կիսամյակից՝ նախորդ ուսումնական կիսամյակի առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողին՝ մրցութային հիմունքով, փոխատեղման արդյունքում:

2) նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն ընդունելության կարգով սահմանված մրցութային հիմունքով, պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հատկացված նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման տեղում ընդունված ուսանողին:

3) ուսումնական հաստատություն ընդունելության կարգով ընդունված և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված հետևյալ սոցիալական խմբերին՝

ա. առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկա-
հող անձանց, որոնց վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական
հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով՝
համաձայն ՔԱՌՆԱՆԳ ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիա-
լական պաշտպանության մասինՄՆ Հայաստանի Հանրապետության
օրենքի,

բ. 1-ին ու 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի
կարգավիճակ ունեցող անձանց, որոնց հերթական քննությունները և
ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում
վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից՝
համաձայն «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սո-
ցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետու-
թյան օրենքի,

գ. զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամ-
կետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դար-
ձած անձանց կամ պարտադիր ժամկետային զինվորական ծառայու-
թյունից զորացրված (զորացրվելուց հետո երեք տարվա ընթացքում)
դիմորդներից ամենաբարձր միավոր ունեցող անձանց (ուսումնական
հաստատություններին Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյան կողմից ըստ մասնագիտությունների հատկացված տեղերում)՝
համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սո-
ցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի.

4) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներ-
կայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ըն-
դունված ուսանողներին.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահ-
մանված կարգով, ուսումնական հաստատություն ընդունված, սահմա-
նամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին:

7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում փոխատեղումներն իրականացվում են ուսումնական կիսամյակն սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում: Փոխատեղման արդյունքում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները տեղափոխվում են անվճար համակարգ, իսկ անվճար համակարգում ընդգրկված, սակայն բարձր առաջադիմություն չունեցող ուսանողներն ընդգրկվում են վճարովի համակարգ: Ուսումնական հաստատության տնօրենի կողմից երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է անվճար և վճարովի համակարգ անցած ուսանողների ցանկը և պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին:

8. Առանց ծնողական խնամքի մնացած և նրանց թվին պատկանող անձանց, գոհված զինծառայողի երեխա-ուսանողներին, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո երեք տարվա ընթացքում ընդունված ուսանողներին, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին, ուսանողական նպաստ տրամադրվում է առաջին կուրսից մինչև ծրագրի ավարտը, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին ու հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց և պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած, ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են առաջին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

9. Ուսումնական հաստատությունը կարող է վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսին, հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը և բարձր առաջադիմության արդյունքները, իր միջոցների հաշվին մասնակի փոխհատուցել ուսման վճարը՝

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին.

2) միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին.

3) 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

4) վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

5) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին.

6) հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին.

7) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին.

8) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնական հաստատության հայեցողությամբ:

10. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից երկու շաբաթ առաջ ուսումնական հաստատության տնօրենը տալիս է հայտարարություն ուսանողներին տեսանելի վայրում, ինչպես նաև ինտերնետային կայքում (առկայության դեպքում) վճարովի հիմունքով սովորող ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հիման վրա ուսման վճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներ ընդունելու մասին:

11. Դիմումներն ընդունվում են հայտարարության օրվանից մինչև կիսամյակի ավարտը, իսկ տվյալ ուսումնական տարում ուսումնական հաստատություն ընդունված ուսանողների դիմումներն ընդունվում են կիսամյակն սկսելուն նախորդող առաջին շաբաթվա ընթացքում: Ուսանողը հաստատության տնօրենի անունով դիմումի հետ մեկտեղ կցում է նաև սույն կարգի 9-րդ կետի 1-7-րդ ենթակետերով սահման-

ված սոցիալական վիճակի վերաբերյալ հավաստող փաստաթղթերը (առկայության դեպքում):

12. Հաջորդ կիսամյակն սկսելուն նախորդող երկու շաբաթվա ընթացքում ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումները և համապատասխան փաստաթղթերը քննարկվում են ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) նիստում՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի ներկայացմամբ: Խորհրդի կողմից հաստատվում է ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների անվանական կազմը, որը տնօրենի կողմից հրապարակվում և պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին երեք աշխատանքային օրվա ընթացքում:

13. Հարգելի պատճառով (առողջական վիճակի պատճառով կամ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի ակադեմիական արձակուրդում գտնվելու կամ ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքերում) ուսումնական հաստատությունից ազատված ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

14. Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմինը:

II. ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

15. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է, որը մրցութային կարգով տրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողին՝ գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձր լեռնային քնակավայրերի ուսանողներին:

16. Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝

1) մասնակցությունն ուսումնական հաստատության ուսանողական, հասարակական աշխատանքներին.

2) զեկուցումները, ռեֆերատները, հրատարակած աշխատանքները (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում).

3) մասնակցությունը միջբուլեջային, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին.

4) այլ ստեղծագործական նախաձեռնություններ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության հայեցողությամբ:

17. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում պետական կրթաթոշակը տրվում է ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին:

18. Սույն կարգի իմաստով ուսանողների պատշաճ վարքագիծն ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների պահպանումն է:

19. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի, Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում՝ ըստ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների, հաստատում է պետական կրթաթոշակներ ստացողների թիվը և չափը:

20. Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման մասին որոշումն ընդունում է հիմնադիրը:

21. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսանողի պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է հաջորդ կիսամյակն սկսելուն նախորդող երկու շաբաթվա ընթացքում՝ ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) նիստում: Միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի ներկայացմամբ խորհուրդը քննարկվում է կիսամյակի արդյունքները և սույն կարգի 16-րդ կետով նախատեսված պայմաններին բավարարելու դեպքում սահմանում է պետական կրթաթոշակներ ստացող ուսանողների անվանական կազմը, որը տնօրենի կողմից հրապարակվում ու պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Պետական կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընդգրկվել ուսումնական նպաստառուների համակարգում՝ սույն կարգի 6-րդ կետի պահանջների բավարարման դեպքում:

22. Պետական կրթաթոշակների չօգտագործված մասը հատկացվում է սույն կարգի 16-րդ կետի պահանջները բավարարող ուսանողներին՝ մրցութային կարգով:

23. Հարգելի պատճառով (առողջական վիճակի պատճառով կամ հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի ակադեմիական արձակուրդում գտնվելու կամ ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքերում) ուսումնական հաստատությունից ազատված ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած՝ կրթաթոշակ ստանալու իրավունքը:

24. Պետական կրթաթոշակների ձևակերպման գործընթացն իրականացնում է ուսումնական հաստատությունը:

25. Ուսումնական հաստատությունը կարող է սեփական միջոցների հաշվին սահմանել ներքուլեջային կրթաթոշակներ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**ՆՄՄԿ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում տարբեր պատճառներով ուսանողներն իրենց ուսումնառությունը թողնում են անավարտ և որոշ ժամանակ անց ցանկություն են ունենում շարունակել և ստանալ համապատասխան որակավորում: Մինչև 2011 թվականը ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման ցանկացած թույլտվություն տալիս էր ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

2011 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվեց և նախարարի 2011 թ. դեկտեմբերի 5-ի N 1278-Ն հրամանով հաստատվեց «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», որով վերականգնման լիազորությունը վերապահվեց ուսումնական հաստատության ղեկավարությանը, ինչպես նաև այն սկբունքները և պահանջները, որոնց բավարարելու դեպքում կարող է վերականգնվել անավարտ թողած անձի ուսանողական իրավունքը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

5 դեկտեմբերի 2011 թ. N 1278-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԱԿԱՐՏ ԹՈՂԱԾ ԱՆՁԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման գործընթացը կանոնակարգելու նպատակով՝

Հրամայում եմ.

1. Հաստատել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը»՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ռ. Աբրահամյան) և իրավաբանական վարչությանը (պետի պաշտոնակատար՝ Լ. Գրիգորյան) սույն փաստաթուղթը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

3. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությանը սահմանված կարգով հրամանը ներկայացնել շահագրգիռ գերատեսչություններին և նախնական մասնագիտական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների տնօրեններին (ռեկտորներին):

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանին:

Արմեն Աշոտյան

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2011 թ. դեկտեմբերի 5-ի
N 1278-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ
ԱՆԱԿԱՐՏ ԹՈՂԱԾ ԱՆՁԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ**

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը:

2. Ուսանողի ուսումնառությունը համարվում է անավարտ, եթե նա՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է ակադեմիական արձակուրդ.

2) սույն կարգին համապատասխան օգտվում է նպատակային արձակուրդից.

3) «Չինապարտության մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստացել է տարկետում և զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության.

4) ազատվել կամ հեռացվել է Հաստատությունից:

3. Հաստատության վերակազմակերպման կամ լուծարման դեպքում ուսանողի մասնագիտական կրթության շարունակումը կազմակերպում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

4. ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված նպատակային արձակուրդի տեսակներից սույն կարգում կիրառվում են հետևյալ տեսակները՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդ.

2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդ.

3) ժամանակավոր անաշխատունակության արձակուրդ:

5. Հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար ուսանողին (մայր) տրամադրվում է մինչև երեք տարի ժամկետով նպատակային արձակուրդ (համաձայն ուսանողի կողմից դիմումով ներկայացված ժամկետի):

6. Ակադեմիական կամ նպատակային արձակուրդում գտնվող, ինչպես նաև «Չինապարտության մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարկետում ստացած և պարտադիր զինվորական ծառայության զորակոչված ուսանողը Հաստատության տնօրենի (ռեկտորի) հրամանով ազատվում է ուսանողական պարտականությունների կատարումից՝ պահպանելով Հաստատությունում իր ուսման տեղը և ուսանողական իրավունքը:

7. Ակադեմիական արձակուրդից, հղիության և ծննդաբերության, մինչև 3 տարեկան երեխային խնամելու համար տրամադրվող նպատակային արձակուրդներից վերադարձած, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված ուսանողն ուսումը շարունակում է նույն Հաստատությունում և նույն մասնագիտությամբ (մասնագիտացմամբ)՝ Հաստատություն վերադառնալու օրվան հաջորդող այն կիսամյակից և կրթական ծրագրի այն փուլից, որտեղից ուսումն անավարտ է թողել:

8. Ակադեմիական կամ հղիության և ծննդաբերության, մինչև 3 տարեկան երեխային խնամելու համար տրամադրվող նպատակային արձակուրդից վերադարձած կամ պարտադիր գինվորական ծառայությունից զորացրված ուսանողի հետ երեք օրվա ընթացքում կնքվում է նոր պայմանագիր, որի պայմանները ուսանողի համար չեն կարող լինել նվազ բարենպաստ, քան նախորդ պայմանագրի պայմաններն էին:

9. Հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնած և այլ մասնագիտություն (մասնագիտացում) տեղափոխված անձի ուսումնառությունն իրականացվում է վճարովի հիմունքով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողից, անվճար ուսուցման համակարգում ուսումնառած և ակադեմիական ու նպատակային արձակուրդից վերադարձած ուսանողից, ինչպես նաև այն դեպքերի, երբ տվյալ տարվա համար պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Լիազորված մարմին) կողմից Հաստատությանը հատկացվել են միայն անվճար տեղեր և առկա է թափուր տեղ:

10. Հաստատությունից ազատված կամ հեռացված անձը, ինչպես նաև վճարովի ուսուցման համակարգում ուսումնառած և ակադեմիական կամ նպատակային արձակուրդից, ինչպես նաև «Չինապարտության մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարկետումից վերադարձած ուսանողը կարող է իր ուսանողական իրավունքը վերականգնել և անավարտ թողած ուսումը շարունակել այն Հաստատությունում, որտեղ նա ուսումը անավարտ է թողել, կամ անձի ցանկությամբ անավարտ թողած կրթական ծրագրին համապատասխան կամ ավելի ցածր կրթական ծրագիր իրականացնող այլ Հաստատությունում՝ պահպանելով հետևյալ սկզբունքները.

1) նախընտրած մասնագիտության համապատասխան կիսամյակի սկզբից, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտության համար

սահմանված ուսումնական պլանների ակադեմիական տարբերությունները չեն գերազանցում 8 առարկան (կամ մոդուլները):

Նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված, սակայն ուսանողի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաները (մոդուլները) ու առարկաների (մոդուլների) ժամաքանակների 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունները համարվում են ակադեմիական տարբերություններ:

2) Ուսանողը ցանկության դեպքում կարող է չկրկնել ուսումնառած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաները (մոդուլները), եթե դրանք համընկնում են նախընտրած մասնագիտության ուսումնական պլանի հետ: Այդ դեպքում ուսանողի ավարտական փաստաթղթում նշվում է նախկինում ստացած գնահատականը:

11. Եթե անվճար ուսուցման համակարգում ուսումնառած և ակադեմիական կամ նպատակային արձակուրդից, ինչպես նաև «Չինապարտության մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարկետումից վերադարձած ուսանողի ուսանողական իրավունքը վերականգնելիս Հաստատությունում իր ուսումնառած մասնագիտությամբ (մասնագիտացմամբ) համապատասխան խումբ չկա, ապա ուսանողական իրավունքը վերականգնվում է ուսանողի ընտրությամբ՝ սույն Հաստատությունում այլ մասնագիտությամբ (մասնագիտացմամբ) անվճար ուսուցման համակարգում՝ պահպանելով սույն կարգի 10-րդ կետով սահմանված սկզբունքները:

Հաստատությունում ուսանողը ուսումնառության ընթացքում կարող է փոխել իր մասնագիտությունը (մասնագիտացումը)՝ պահպանելով սույն կարգի 10-րդ կետով սահմանված սկզբունքները և 13-րդ կետով սահմանված պահանջները:

Միջին մասնագիտական կրթական ծրագրով հիմնական կրթության հիմքով ընդունված ուսանողին մասնագիտության (մասնագիտացման) փոփոխություն, որի դեպքում փոփոխվում է կրթության հիմքը, թույլա-

տրվում է չորրորդ կիսամյակը ավարտելուց հետո, եթե տվյալ կրթական ծրագրի իրականացման ժամկետները համապատասխանում են:

12. Հաստատությունից հեռացված անձը իր ուսանողական իրավունքը վերականգնելու համար Հաստատություն կարող է դիմել հեռացման համար հիմք հանդիսացած հանգամանքը վերանալուց հետո:

13. Անձը կարող է իր ուսանողական իրավունքը վերականգնել հետևյալ պայմանների ապահովմամբ՝

1) Հաստատությունից հեռացված անձի ուսանողական իրավունքը վերականգնվում է ուսումնառած կիսամյակի սկզբից,

2) ուսանողական իրավունքը վերականգնելու դեպքում պետք է պահպանվեն համապատասխան մասնագիտություններով և ուսուցման ձևով Լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար Հաստատությանը հատկացված տեղերի ընդհանուր թիվը, բացառությամբ՝ ակադեմիական արձակուրդից, մեկ տարուց ավելի տևողությամբ նպատակային արձակուրդից, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալու դեպքերի,

3) ազատված կամ հեռացված անձի ուսանողական իրավունքը սույն կարգի 10-րդ կետով սահմանված սկզբունքների համապատասխան վերականգնելու դեպքում այն չի համընկնում առաջին կիսամյակին:

14. Ուսանողական իրավունքը վերականգնելու համար դիմումը ներկայացվում է կիսամյակների ուսումնական պարապմունքները սկսելուն նախորդող և հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ այն Հաստատության տնօրենին (ռեկտորին), որտեղ դիմողը ցանկանում է վերականգնել իր ուսանողական իրավունքը:

Այլ ժամկետում ուսանողական իրավունքի վերականգնումը կատարվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համաձայնությամբ:

15. Ուսման վճարը չվճարելու հիմքով հեռացված անձը ազատման/հեռացման հրամանի օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա

ընթացքում ուսանողական իրավունքի վերականգնման դիմում ներկայացնելու և վարձավճարը վճարելու դեպքում կարող է շարունակել իր ուսումնառությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ օրերը համընկնում են կիսամյակային քննաշրջանի հետ:

16. Ուսանողական իրավունքը վերականգնելու մասին դիմումին կցվում են Հաստատությունից ազատման կամ հեռացման հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և հետևյալ փաստաթղթերը՝

1) 4 լուսանկար (3x4 չափսի),

2) կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ դրա նոտարական հաստատումով վավերացված պատճենը,

3) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, կամ ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան դիմորդի համար, կամ զինվորական գրքույկ, կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական),

4) կցագրման վկայական (գորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք սովող համապատասխան նշումի կամ չգորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական գորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),

5) ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնության իրավունքը հաստատող փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում), որը Հաստատության տնօրենը (ռեկտորը) ուսանողներին հրամանագրելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Լիազորված մարմնին,

6) աշխատանքային գործունեության կամ մասնագիտական աշխատանքի վերաբերյալ համապատասխան տեղեկանքը (դրա առկայության դեպքում):

17. Դիմումը(ները) ստանալուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում Հաստատության տնօրենը (ռեկտորը)՝ սույն կարգի 10-րդ կետով սահմանված սկզբունքների և 13-րդ կետով սահմանված պահանջների ապահովման դեպքում՝ տալիս է ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողի ընդունման ժամանակավոր հրաման, որին կցվում է ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ժամանակացույցը՝ ուսանողին կցագրելով համապատասխան խմբում և թույլատրելով մասնակցելու ուսումնական պարապմունքներին:

18. Ակադեմիական տարբերությունների հանձնման առավելագույն ժամկետը մեկ ամիս է: Հաստատությունը պարտավոր է անհրաժեշտ պայմաններ ստեղծել ուսանողի կողմից դասընթացների ծրագրային տարբերությունների ուսումնասիրման համար:

19. Սույն կարգի 13-րդ կետի պահանջների չպահպանման դեպքում՝ տնօրենի (ռեկտորի) կողմից պատճառաբանված մերժվում է դիմումը: Ուսումնառության ընդհատման տևողությունը ուսանողական իրավունքի վերականգնելու վերաբերյալ դիմումը մերժելու հիմք չէ:

20. Եթե Հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած անձանց թիվն ավելի է համապատասխան մասնագիտության տվյալ տարվա համար Լիազորված մարմնի կողմից հատկացված ընդունելության տեղերի ընդհանուր թվից, ապա առաջնահերթությունն ըստ հաջորդականության տրվում է՝

1) ակադեմիական արձակուրդից, մեկ տարուց ավելի տևողությամբ նպատակային արձակուրդից, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձածին.

2) նախընտրած մասնագիտությամբ աշխատողին.

3) առավելագույն մասնագիտական ստաժ ունեցողին.

4) առավել քիչ ակադեմիական տարբերություն ունեցողին.

5) Հաստատությունից ազատվածներին:

21. Ակադեմիական տարբերությունների ցանկը և ուսանողի կողմից դրանց հանձնման անհատական ժամանակացույցը կազմվում է այն Հաստատության կողմից, որտեղ վերականգնվելու է ուսանողական իրավունքը:

22. Ակադեմիական տարբերությունների բացակայության կամ ակադեմիական տարբերությունները դրական հանձնելու դեպքում Հաստատության տնօրենը 3 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է Հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողին:

23. Ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողի հետ կնքվում է պայմանագիր, նրա համար կազմվում է նոր անձնական գործ, որտեղ ընդգրկվում են նաև սույն կարգի 16-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, իսկ ուսանողին տրվում է ուսանողական տոմս, առաջադիմության գրքույկ և նրա հետ կնքած պայմանագրի երկրորդ օրինակը:

24. Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից հեռացված կամ ազատված անձինք կարող են իրենց ուսանողական իրավունքը վերականգնել Հաստատությունում՝ սույն կարգի 13-րդ կետի սկզբունքների համաձայն:

25. Օտարերկրյա Հաստատությունում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքը վերականգնվում է Հաստատությունում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համաձայնությամբ՝ պահպանելով սույն կարգի 13-րդ կետով սահմանված սկզբունքները:

26. Հաստատությունը՝ յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին, Լիազորված մարմինն է ներկայացնում ուսանող(ների) ուսանողական իրավունքի վերականգնման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով ուսանողական իրավունքի վերականգնման հիմքը, կրթական ծրագիրը, կիսամյակը, ուսուցման ձևը, մասնագիտությունը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԶԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվեց և ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25 N1295-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը, որի նպատակն է կրթությունը մատչելի դարձնել օտարերկրացիների համար:

Միաժամանակ հնարավորություն է ընձեռնված օտարերկրյա քաղաքացիներին ընդունվել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 254-Ն հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգով»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2011 թվականի N 1295-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԶԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասին և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

S. Սարգսյան

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐԹԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են օտարերկրյա քաղաքացիների (այսուհետ՝ օտարերկրացիներ) Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ հաստատություն) ընդունելության կարգը և պայմանները:

2. Սույն կարգը նպատակ ունի կրթությունը մատչելի դարձնել օտարերկրացիների համար:

3. Սույն կարգի գործողությունը տարածվում է պետական և հավատարմագրված ոչ պետական հաստատությունների վրա՝ անկախ ուսուցման ձևից:

II. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

4. Օտարերկրացիների հաստատություն ընդունելությունը կատարվում է իրենց ընտրությամբ՝ ընդհանուր հիմունքներով կամ սույն կարգով սահմանված պայմաններով՝ առկազն հիմնական կրթության հիմքով:

5. Հաստատություն ընդունելությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտություն-

ների ցանկին (բացառությամբ ռազմական և ոստիկանական նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության) համապատասխան:

6. Օտարերկրացիների ընդունելությունը հաստատություն կատարվում է՝

1) պայմանագրային հիմունքով (վճարովի)։

2) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված կրթական և գիտական համագործակցության մասին Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա:

7. Օտարերկրացիները, որոնք ցանկանում են սովորել Հայաստանի Հանրապետությունում, պետք է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի անունով։

2) նախարարության կողմից տրամադրված դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն ձևի։

3) անձնագրի կամ ծննդյան վկայականի բոլոր էջերի պատճենները և (կամ) մկրտության վկայականը։

4) կրթական աստիճանի ավարտական փաստաթղթի պատճենը։

5) 3 x 4 չափսի 4 լուսանկար։

6) ինքնակենսագրություն (CV)՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

8. Սույն կարգի 7-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերն ընդունվում են քննարկման՝ օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կողմից հյուպատոսական վավերացման առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ միջազգային պայմանագրերով:

9. Հաստատություն դիմած օտարերկրացիների փաստաթղթերի (այդ թվում՝ դիվանագիտական ուղիներով և փոստով ստացված) փորձաքննությունը և հաշվառումն իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) նախարարությունը կատարում է դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրությունը և հաշվառումը, որից հետո փաստաթղթերն ուղեգիր-նամակով ուղարկվում են համապատասխան ուսումնական հաստատություն՝ դիմորդների գիտելիքների (հայերեն կամ այլ լեզուների իմացություն) ստուգումը և ընդունելությունը կազմակերպելու համար.

2) դիմորդների գիտելիքների ստուգումն անցկացվում է տվյալ հաստատության կողմից հաստատված կարգով, որի արդյունքների հիման վրա նրանք կարող են ընդունվել կամ նախապատրաստական բաժին, կամ առաջին կուրս: Գիտելիքների ստուգման կարգը և առարկայական ծրագրերը ներկայացվում են նախարարություն՝ մինչև տվյալ տարվա դիմորդների փաստաթղթերն ընդունելու ժամկետի սկիզբը (ժամկետները հաստատվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով).

3) պետության կողմից տրամադրվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ ընդունելության տեղերի բաշխումն իրականացնում է միայն նախարարությունը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվող հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նախարարության և հաստատությունների ներկայացուցիչներ, իսկ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական բժշկական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ներկայացուցիչները:

10. Փաստաթղթերը նախարարություն ներկայացվում են՝

1) դիմորդի կողմից անձամբ կամ նրա լիազորված անձի կողմից.

2) ուսումնական հաստատության կողմից.

3) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով.

4) փոստով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով)՝ նախարարության պաշտոնական հասցեով:

11. Ներկայացված դիմումը կարող է մերժվել, եթե սույն կարգի 7-րդ կետում նշված փաստաթղթերից որևէ մեկը պատշաճ կերպով չի ներկայացվել կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ամբողջացվել, ինչպես նաև սույն կարգի 8-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

12. Փաստաթղթերը ներկայացվում են հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

13. Սույն կարգով Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններ դիմորդների ընդունելությունն իրականացվում է նախարարության կողմից փաստաթղթերի փորձաքննությունից՝ փաստաթղթում առկա տեղեկատվության իսկության ստուգումից և հյուպատոսական վավերացման առկայությունը ճշտելուց, ինչպես նաև հաշվառելուց, միասնական տեղեկատվական բանկի ստեղծումից հետո, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ուղեգիր-նամակների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատության ղեկավարի հրամանով:

14. Օտարերկրացիների համար օտար լեզվով ուսուցում իրականացնող հաստատությունը պետք է կազմակերպի նախապատրաստական դասընթացներ:

15. Օտարերկրացիները, որոնք չեն տիրապետում հայերենին, ռուսերենին կամ անգլերենին մասնակցում են հաստատության նախապատրաստական դասընթացներին:

16. Սույն կարգով ընդունելության ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով:

17. Հաստատությունում նախապատրաստական դասընթացներն իրականացվում են երկու (յուրաքանչյուրը վեց ամիս տևողությամբ) փուլերի միջոցով՝ դիմորդի ուսումնառության լեզվի իմացության մակարդակին համապատասխան՝

1) ընտրված ուսումնառության լեզվի ընդհանուր գիտելիքների ձեռքբերում:

2) ընտրված ուսումնառության լեզվով հիմնական (բազային) մասնագիտական տերմինների, հասկացությունների ուսուցում:

18. Նախապատրաստական դասընթացներում օտարերկրացիներն ուսումնասիրում են նաև հայերեն, ինչպես նաև ուսանելու ընթացքում ծանոթանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

19. Օտարերկրացիների ուսուցումը, հեռացումը (ազատումը) և վերականգնումը, շարժունությունն իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում գործող կարգերին համապատասխան: Սույն կարգով ընդունված ուսանողների հեռացման (ազատման) և շարժունության մասին տեղեկություններն ուսումնական հաստատությունները ներկայացնում են նախարարություն՝ համապատասխան որոշում ընդունելուց հետո երկշաբաթյա ժամկետում:

20. Օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝

1) տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նախարարության կողմից յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ատեստավորված, օտար լեզվով դասավանդելու երաշխավորություն ստացած կամ միջազգայնորեն ընդունված լեզվի իմացության մասին փաստաթուղթ ներկայացրած մասնագետներով:

2) կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ՝ օտար լեզվով դասավանդող մասնագետների համար:

21. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելության ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ուսումնական հաստատությունը նախարարություն, իսկ բժշկական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կողմից նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացնում տեղեկանք ընդհանուր հիմունքներով ընդունված օտարերկրացիների և սույն կարգով ընդունվածների վերաբերյալ:

22. Ուսումնական հաստատությունը պարտավոր է օտարերկրացու հետ կնքվող պայմանագրում ներառել առանձին դրույթ՝ Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագիր և ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների վերաբերյալ:


23. Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններից անկախ պատճառից ուսումն ընդհատած ուսանողի փաստաթղթերը վերադարձվում են դրանց պատճենահանումից և արխիվացնելուց հետո:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Հարցաթերթիկի ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE



Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ

ՀՀ-ում սովորող օտարերկրացի ուսանողների համար

APPLICATION FORM

for foreign students studying in RA

1. Անունը / Name _____ Ազգանունը / Surname _____

2. Ծննդյան թիվը/ _____ 3. Ծննդյան վայրը/ _____

Date of birth _____ օրը/ամիսը/ տարեթիվը _____ Place of birth _____
day/month/year

4. Երկիրը/ Country _____

5. Քաղաքացիությունը/ Citizenship _____

6. Ազգությունը/ Nationality _____

7. Սեռը/Sex` «արական/Male» իգական/ Female

8. Բնակության վայրը/ Address _____

Քաղաքը/ City _____ Երկիրը/ Country _____

Հեռ./Phone _____ Ֆաքս/Fax _____

9. Ընտանեկան վիճակը/Marital status <<ամուսնացած/ Married>>
չամուսնացած/ Single

10. Նախկինում ավարտած ուսումնական հաստատության (դպրոցի)
անվանումը

Name of previous educational institution (school)

_____ գտնվելու վայրը/ address _____

Քաղաքը/ City _____ Երկիրը/ Country _____

Ուսուցումն սկսվել է _____ Ավարտվել է _____

Date of study ամիս/տարեթիվ/ month/year Graduated

ամիսը/տարեթիվը/month/year

11. ՀՀ-ում ուսումնական հաստատությունը/ Name of institution in RA

Մասնագիտությունը/Speciality _____ Կուրսը/ Year _____

Ուսուցումը/Study:

Ուսուցման սկիզբը/ From _____

ամիսը/տարեթիվը/ month/year

Ուսուցման ավարտը/ To _____

ամիսը/տարեթիվը/ month/year

12. Հայոց լեզվի իմացությունը/ Armenian proficiency

<<գերազանց/excellent>> լավ/good <<բավարար/fair>> չեմ

տիրապետում/none

13. Այլ լեզուներ/ Other languages _____

14. Նշել մշակութային, կրթական և մասնագիտական ընկերակցության
անվանումը (անվանումները), որին (որոնց) դուք անդամակցում եք

Your membership in cultural and professional organizations/associations

15. ՀՀ-ում բնակության վայրը / Resident address in RA

Քաղաքը/ City _____ Տան հեռ./ Յոթե ֆոն _____

16. Ընտանիքի անդամները (հայրը, մայրը, կինը, եղբայրը, քույրը):
Եզել անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան թիվը, աշխատանքի
վայրը, պաշտոնը/մասնագիտությունը/

Members of family (father, mother, wife, brother, sister). State name,
surname, date of birth, work place, position/profession.

Հայրը/Father _____

անունը/ name, ազգանունը/surname, ծննդյան թիվը/date of birth

Աշխատանքի վայրը/ Work place _____

Պաշտոնը/մասնագիտությունը/ Position/profession _____

Մայրը/Mother _____

անունը/ name, ազգանունը/surname, ծննդյան թիվը/date of birth

Աշխատանքի վայրը/ Work place _____

Պաշտոնը/մասնագիտությունը Position/profession _____

Եղբայր/քույր/ Brother, sister _____

Ուսանող _____ 20 ____թ.

Student ստորագրությունը / signature

*Պատասխանները տպել կամ լրացնել ընթերցելի ձեռագրով Type or
print legibly.*

**ՆԱՄԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգումն ուսումնական գործընթացի ավարտական փուլն է, որի նպատակն է որոշել շրջանավարտների մասնագիտական որակավորման մակարդակը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան, ինչպես նաև շնորհել համապատասխան որակավորում:

2006 թվականի հուլիսի 21-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի N 638-Ն հրամանով հաստատվեց «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», որով սահմանվեց.

1. Ընդհանուր դրույթները
2. Պահանջները՝ պետական ամփոփիչ ստուգման
3. Պետական որակավորող հանձնաժողովի ձևավորումը
4. Պետական որակավորող հանձնաժողովի գործունեության կազմակերպումը և ընթացակարգը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

21 հունիսի 2006 թ. N 638-Ն
ք. Երևան

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 2-րդ գլխի 10-րդ կետի ժե) ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը»՝ կից 1-3 հավելվածներով:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության միջին և նախնական մասնագիտական կրթության վարչությանը և օրենսդրության և իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ. Գրիգորյան), սահմանված կարգով

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը» ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

Նախարար

Լ. Մկրտչյան

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

*Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարար*

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ

18 հունիսի 2006 թ.

Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների վրա:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ մասնագիտական ուսումնական հաստատություններ) պետական ամփոփիչ ստուգումն ուսումնական գործընթացի ավարտական փուլն է, որի նպատակն է որոշել շրջանավարտների մասնագիտական որակավորման մակարդակը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

3. Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման նպատակով մասնագիտական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր մասնագիտության գծով ձևավորվում են պետական որակավորող հանձնաժողովներ:

4. Պետական որակավորող հանձնաժողովի գործունեության գործառույթների մեջ են մտնում.

- մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների, նրանց ստացած մասնագիտության գծով ինքնուրույն աշխատանքային գործունեություն իրականացնելու պատրաստականության ստուգումը և գնահատումը,

- շրջանավարտներին համապատասխան որակավորում շնորհելու և պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) տալու հարցի որոշումը,

- մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագետների և արհեստավորների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը:

II. ՊԱՅԱՆՁՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

5. Մասնագիտական ուսումնական հաստատություններում շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգումը կարող է անցկացվել հետևյալ ձևերով.

- պետական քննություն մասնագիտական առանձին առարկայից,

- պետական քննություն մասնագիտական մի քանի առարկաներից (միջառարկայական քննություն),

- դիպլոմային նախագիծ,

- դիպլոմային աշխատանք:

6. Առանձին առարկայից պետական քննությունն անց է կացվում հարցատոմսերով, որոնք ներառում են տվյալ առարկայի հիմնական բովանդակությանը համապատասխան հարցեր:

7. Պետական միջառարկայական քննությունն անց է կացվում հարցատոմսերով: Այդ հարցատոմսերը ներառում են առանձին մասնագի-

տական առարկաների հիմնական բովանդակությանը համապատասխան հարցեր, որոնք բխում են տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված շրջանավարտի որակավորման բնութագրից:

8. Պետական քննությունները կարող են անցկացվել բանավոր, գրավոր, թեստային, գործնական աշխատանքների, իրավիճակային խնդիրների, դերային կատարումների, դրանց համակցված և այլ ձևերով:

9. Դիպլոմային նախագիծը կամ դիպլոմային աշխատանքը կոչված է համակարգելու և ամրապնդելու շրջանավարտների գիտելիքներն ու կարողությունները և, որպես կանոն, պետք է ունենա գործնական նշանակություն՝ մասնագիտությունից որոշակի խնդիր(ներ) լուծելու առումով:

Դիպլոմային նախագծի (աշխատանքի) թեմաները սահմանվում են մասնագիտական ուսումնական հաստատության կողմից՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները կամ նրա զարգացման միտումները: Դիպլոմային նախագծի (աշխատանքի) նախապատրաստման ընթացքում ուսումնական հաստատության տնօրենի հրամանով յուրաքանչյուր շրջանավարտին կցվում է ղեկավար(ներ), իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև խորհրդատու(ներ):

Դիպլոմային նախագիծը (աշխատանքը) ենթակա է գրախոսման:

III. ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

10. Պետական որակավորող հանձնաժողովը՝ կազմված նախագահից, նախագահի տեղակալից և հանձնաժողովի անդամներից, ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարի և գործում տվյալ օրացուցային տարվա ընթացքում: Հանձնաժողովի կազմը պետք է կազմված լինի առնվազն 5 հոգուց:

11. Պետական որակավորող հանձնաժողովի նախագահին, ըստ մասնագիտական ուսումնական հաստատության ենթակայության,

նշանակում է համապատասխան նախարարությունը (գերատեսչությունը)՝ մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի առաջարկությամբ, տվյալ ոլորտի առավել բարձրակարգ մասնագետների թվից, որոնք չեն աշխատում տվյալ ուսումնական հաստատությունում:

12. Պետական որակավորող հանձնաժողովում, որպես նախագահի տեղակալ, ընդգրկվում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը կամ տնօրենի տեղակալը (տեղակալները):

Պետական որակավորող հանձնաժողովի կազմում ընդգրկվում է քարտուղարը, որին նշանակում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը՝ հաստատության աշխատակիցների կազմից:

Պետական որակավորող հանձնաժողովի կազմում, որպես անդամներ, ընդգրկվում են համապատասխան ամբիոնների (ցիկլային (առարկայական) հանձնաժողովների) վարիչները, դասախոսները:

Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու նպատակով կարող են հրավիրվել նաև համապատասխան ոլորտի գործատուներ, նրանց ներկայացուցիչներ, այլ մասնագիտական, այդ թվում և բարձրագույն, ուսումնական հաստատությունների մասնագետներ:

Պետական որակավորող հանձնաժողովի անվանական կազմը իր հրամանով հաստատում է մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը՝ պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքները սկսելուց առնվազն երկու շաբաթ առաջ:

**IV. ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

13. Պետական որակավորող հանձնաժողովների աշխատանքները կազմակերպվում են մասնագիտական ուսումնական հաստատության տվյալ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:

14. Պետական ամփոփիչ ստուգման թույլատրվում են այն ուսանողները, ովքեր կատարել են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր պահանջները:

15. Յուրաքանչյուր պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը, համաձայնեցված հանձնաժողովի նախագահի հետ, ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի ներկայացմամբ հաստատում է հաստատության տնօրենը:

16. Տվյալ մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգումների միջև եղած ժամանակահատվածը սահմանվում է 5-7 օր:

Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը փակցվում է ի տես բոլորի՝ դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունից կամ պետական քննությունից առնվազն 1 շաբաթ առաջ:

17. Պետական որակավորող հանձնաժողովին մինչև պետական քննությունների կամ դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանության սկիզբը ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

17.1 Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի կողմից հաստատված տեղեկանքը ուսանողի կողմից ուսումնական պլանով նախատեսված առարկաների, պրակտիկաների ամփոփիչ ստուգման վերաբերյալ:

17.2 Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հրամանի քաղվածքը ուսանողին պետական քննությանը կամ դիպլոմային նախագծի (աշխատանքի) պաշտպանությանը թույլատրության վերաբերյալ:

Տրանսպորտային միջոցների վարորդի որակավորում տվող մասնագիտությունների գծով, պետական քննությունից առաջ, ՀՀ պետավտոտեսչության համապատասխան ստորաբաժանումներում անց է կացվում ուսանողների քննություն՝ տրանսպորտային միջոցների վարման իրավունքի վկայական ստանալու համար:

17.3 Բանավոր պետական քննության տոմսերի փաթեթը կամ գրավոր պետական քննության հանձնարարությունների տարբերակները:

17.4 Պետական քննությունների առարկայական ծրագրերը, իսկ արվեստի մասնագիտությունների գծով՝ ելույթների ծրագրերը:

17.5 Դիպլոմային նախագիծը /աշխատանքը/ ղեկավարի կարծիքի և համապատասխան ոլորտի կազմակերպության կամ մասնագիտական ուսումնական հաստատության մասնագետի գրախոսականի հետ՝ դիպլոմային նախագծի /աշխատանքի/ պաշտպանության դեպքում: Գրախոսների կազմը համապատասխան ամբիոնի վարիչի (ցիկլային (առարկայական) հանձնաժողովի նախագահի) ներկայացմամբ հաստատում է ուսումնական հաստատության տնօրենը:

Պետական որակավորող հանձնաժողովին կարող են ներկայացվել նաև կատարված դիպլոմային նախագծի (աշխատանքի) գործնական արժեքը բնութագրող այլ նյութեր՝ գործնական կիրառությունը մատնանշող փաստաթղթեր, մանրակերտեր, նյութերի, իրերի, գյուղատնտեսական արտադրանքի նմուշներ և այլն, ինչպես նաև պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ անհրաժեշտ սարքավորումներով գործնական աշխատանքների կատարում:

18. Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունը կամ պետական քննությունների հանձնումը կատարվում է պետական

որակավորող հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի 2/3-ից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունը կարող է տեղի ունենալ ինչպես մասնագիտական ուսումնական հաստատություններում, այնպես էլ կազմակերպություններում, որոնց համար պաշտպանվող նախագծի (աշխատանքի) թեմատիկան ներկայացնում է տեսական կամ գործնական հետաքրքրություն:

19. Պետական քննությունների քանակը սահմանվում է տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի պահանջներին կամ ուսումնական պլանին համապատասխան:

20. Պետական քննության կամ դիպլոմային նախագծի (աշխատանքի) պաշտպանության տևողությունը, որպես կանոն, չպետք է գերազանցի 30 րոպե՝ յուրաքանչյուր ուսանողի համար:

Դիպլոմային նախագծի (աշխատանքի) բովանդակությունը ներկայացնելու համար ուսանողին տրվում է մինչև 20 րոպե ժամանակ:

21. Դիպլոմային նախագծի (աշխատանքի) և պետական քննության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»:

Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանության, ինչպես նաև պետական քննությունների հանձնման արդյունքները հայտարարվում են նույն օրը՝ պետական որակավորող հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո:

22. Դիպլոմային նախագիծ (աշխատանք) պաշտպանած կամ պետական քննությունները դրական հանձնած ուսանողին պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

23. Մասնագիտական ուսումնական հաստատության շրջանավարտին, որը ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարբե-

րակված ստուգարքների (կիսամյակային գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը հանձնել է «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով, միաժամանակ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) պաշտպանել կամ պետական քննությունները հանձնել է «գերազանց» գնահատականներով տրվում է գերազանցության դիպլոմ:

24. Պետական որակավորող հանձնաժողովի որոշումները դիպլոմային նախագծի (աշխատանքի) և պետական քննությունների ժամանակ դրսևորած գիտելիքների գնահատականի, ինչպես նաև որակավորում շնորհելու և դիպլոմ (գերազանցության կամ ոչ գերազանցության) տալու մասին ընդունվում են պետական որակավորող հանձնաժողովի փակ նիստում՝ բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում նախագահի ձայնը որոշիչ է:

25. Պետական որակավորող հանձնաժողովի բոլոր նիստերը արձանագրվում են արձանագրությունների հատուկ գրքում: Պետական որակավորող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները կազմվում են համաձայն սահմանված ձևերի (NN 1, 2 հավելվածներ):

Արձանագրության մեջ նշվում են ուսանողի դիպլոմային նախագծի (աշխատանքի) կամ պետական քննությունների գնահատականները, ինչպես նաև սրան տրված հարցերը, հատուկ կարծիքները և այլն: Արձանագրության մեջ նշվում է շնորհված որակավորումը և մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտողի դիպլոմի տեսակը (գերազանցության կամ ոչ գերազանցության):

Արձանագրությունները ստորագրում են պետական որակավորող հանձնաժողովի նախագահը, սրա տեղակալը և նիստին մասնակցած անդամները:

Արձանագրությունների գիրքը թելակարվում, էջակալվում, կնքվում և պահվում է մասնագիտական ուսումնական հաստատության գործերում:

26. Այն դեպքերում, երբ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) գնահատվում է «անբավարար», պետական որակավորող հանձնաժողովը որոշում է՝ կարող է արդյոք ուսանողը, հաշվի առնելով հանձնաժողովի դիտողությունները, պաշտպանել դիպլոմային նույն նախագիծը (աշխատանքը) երկրորդ անգամ, թե պետք է մշակի համապատասխան ամբիոնի կողմից տրվող նոր թեմա կամ հանձնի պետական քննություն:

Պետական քննությունից «անբավարար» գնահատական ստանալը չի զրկում ուսանողին մյուս պետական քննությունները հանձնելու հրավույնքից:

27. Դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին թույլատրվում է վերահանձնել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) կամ պետական քննությունները ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո 3 տարվա ընթացքում:

Ուսանողը պետական քննությունները վերահանձնելիս հանձնում է քննություններ այն առարկաներից, որոնք նախատեսված են եղել նրա ավարտման տարում գործող ուսումնական պլանով: Մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց երեք տարուց հետո պետական քննությունների վերահանձնման թույլտվությունը տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

28. Այն ուսանողները, որոնք չեն պաշտպանել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) կամ չեն հանձնել պետական քննությունները հարգելի պատճառով (փաստաթղթերով հաստատված), մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը կարող է երկարացնել նրանց ուսուցման ժամկետը մինչև պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի հաջորդ քննաշրջանը, բայց մեկ տարուց ոչ ավելի:

29. Դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին տրվում են ուսում-

նառության լրիվ կուրսը ավարտելու մասին տեղեկանք (հավելված 3) և սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

30. Երկրորդ անգամ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին թույլատրվում է վերականգնվել տվյալ մասնագիտության վերջին կուրսում՝ կրկնելով այդ ամբողջ կուրսի ծրագրային նյութը: Դիպլոմային նախագծի (աշխատանքի) պաշտպանություն կամ պետական քննությունների հանձնում միևնույն առարկայից երրորդ անգամ չի թույլատրվում:

31. Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովի նախագահը մեկ շաբաթվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին և պատճենը նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենին:

Հաշվետվության մեջ պետք է նշվի՝ պետական որակավորող հանձնաժողովների քանակական և որակական կազմը, պետական ամփոփիչ ստուգման անկացման ձևերը (պետական քննություն, դիպլոմային նախագիծ (աշխատանք), տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստվածության մակարդակը մասնագիտական ուսումնական հաստատությունում, դիպլոմային նախագծերի (աշխատանքների) կատարման որակը, դիպլոմային նախագծերի (աշխատանքների) թեմաների համապատասխանությունը գիտության, տեխնիկայի, մշակույթի և արտադրության ժամանակակից պահանջներին, ուսանողների՝ պետական քննությունների ժամանակ դրսևորած գիտելիքների բնութագիրը, առանձին առարկաների գծով ուսանողների պատրաստվածության գործում եղած թերությունները, գերազանցության դիպլոմների քանակը, պետական ամփոփիչ ստուգման յուրաքանչյուր տեսակի արդյունքների վերլուծությունը: Հաշվետվության մեջ նշվում են նաև առաջարկություններ

մասնագետների պատրաստման հետագա կատարելագործման վերաբերյալ:

32. Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հրամանով հաստատվում է պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ շրջանավարտների համապատասխան որակավորման և պետական ավարտական նմուշի փաստաթղթի (դիպլոմի) շնորհումը և ուսումնական հաստատության ավարտումը:

33. Մասնագիտական ուսումնական հաստատության շրջանավարտներին պետական ավարտական նմուշի փաստաթղթի (դիպլոմի) հանձնումը կատարվում է հանդիսավոր պայմաններում:

34. Պետական որակավորող հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը քննարկվում է մասնագիտական ուսումնական հաստատության խորհրդում, որի հիման վրա մշակվում են ուսումնական գործընթացը կատարելագործելու առաջարկություններ:

Հավելված 1

ՀՀ կրթության և գիտության նախարարի

« _____ » _____ 2006 թ.

N _____ հրամանի

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _____

(Ուսումնական հաստատության անվանումը)

(Մասնագիտության անվանումը)

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ո Ր Ա Կ Ա Կ Ո Ր Ո Ղ Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Կ Ի

« _____ » _____ 20__ թ.

կայացած նիստի

(_____ (Ժամը, րոպե) մինչև _____ (Ժամը, րոպե)

Ներկա էին.

Նախագահ _____

Նախագահի տեղակալ _____

Անդամներ _____

Քարտուղար _____

Պետական որակավորող հանձնաժողովը որոշում է պետական քննություն հանձնաժ (դիպլոմային Նախագիծ (աշխատանք) պաշտպանած) ուսանողներին նշանակել հետևյալ գնահատականները.

Հ/Հ	Ուսանողի անունը, ազգանունը, հայրանունը	Քննական տոմսի համարը	Գնահատականը (տառերով և թվերով)
1			
2			
3			
և այլն			

Պետական որակավորող
հանձնաժողովի
կարծիքը

Նախագահ _____
 Նախագահի տեղակալ _____
 Անդամներ _____

 Զարտուղար _____

Հավելված 2

ՀՀ կրթության և գիտության նախարարի

«___» _____ 2006 թ.

N _____ հրամանի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _____

(Ուսումնական հաստատության անվանումը)

(Մասնագիտության անվանումը)

ՊԵՏԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՁՆԱԾ (ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾԸ
(ԱՇԽԱՏԱՆՔԸ) ՊԱՇՏՊԱՆԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ
ՇՆՈՐՀՈՂ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՆՍՈՒՇԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՐԴԹ
(ԴԻՊԼՈՄ) ՀԱՆՁՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

«___» _____ 20___ թ.

կայացած նիստի

(_____ (ժամը, րոպե) մինչև _____ (ժամը, րոպե)

Ներկա էին.

Նախագահ _____

Նախագահի տեղակալ _____

Անդամներ _____

Քարտուղար _____

Պետական որակավորող հանձնաժողովը որոշում է.

I. Շնորհել _____

(որակավորման անվանումն ըստ ուսումնական պլանի)

և հանձնել գերազանցության պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) հետևյալ ուսանողներին.

1. _____

(ուսանողի անուն, ազգանուն, հայրանունը)

2. _____

II. Շնորհել _____

(որակավորման անվանումն ըստ ուսումնական պլանի)

և հանձնել պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) հետևյալ ուսանողներին.

1. _____

(ուսանողի անուն, ազգանուն, հայրանունը)

2. _____

3. _____

Հավելված 3

ՀՀ կրթության և գիտության նախարարի

«___» _____ 2006 թ.

N _____ հրամանի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ

Տրվում է _____,

(ազգանուն, անուն, հայրանուն)

որ նա 20 թ. ընդունվել է _____

(ուսումնական հաստատության լրիվ անվանումը)

և 20 թ. ավարտել է _____

(մասնագիտության անվանումը)

_____ լրիվ դասընթացը:

Սույն տեղեկանքը ենթակա է փոխարինման պետական նմուշի ավարտական փաստաթղթով (դիպլոմով)՝ ուսանողի կողմից պետական քննությունները հաջողությամբ հանձնելու դեպքում:

Կ.Տ.

_____ (ուսումնական հաստատության տնօրեն)

_____ (Քարտուղար)

Քաղաք

Հաշվառման համար __

«___» _____ 20 թ.

**ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԱՐՅԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Չիմք ընդունելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջը 2011 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակվեց և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մարտի 12-ի թիվ 194-Ն հրամանով հաստատվեց «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը»:

Կարգով սահմանվեց մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու երկու սկզբունք.

1) մասնագիտական հիմնական կրթական ծրագրին զուգահեռ կրթություն,

2) հաջորդական կրթություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

12 մարտի 2011 թ. N 194-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջը՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել <<Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը>>՝ համաձայն հավելվածի:

2. Նախարարության աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ռ.Աբրահամյան) և իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ.Գրիգորյան)՝ սահմանված կարգով հրամանը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա.Ավետիսյանին:

ՀՀ կրթության և գիտության

Նախարար՝

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2011 թվականի մարտի 12-ի
թիվ 194-Ն հրամանի

ԿԱՐԳ

**ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է մեկից ավելի նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական (այսուհետ՝ մասնագիտական) կրթություն ստանալու ընդհանուր պայմանները:

2. Մեկից ավելի մասնագիտական կրթությունն իրականացվում է մասնագիտական հիմնական կրթական ծրագրին զուգահեռ (այսուհետ՝ զուգահեռ կրթություն) կամ հաջորդականության սկզբունքով (այսուհետ՝ հաջորդական կրթություն), որն ավարտվում է պետական ամփոփիչ ատեստավորմամբ և շրջանավարտին տրվում է համապատասխան որակավորում:

3. Ուսանողն իրավունք ունի ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում են հաստատությունները:

4. Մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրի՝ նույն մասնագիտության տարբեր աստիճաններում ուսումնառությունը չի հա-

մարվում մեկից ավելի կամ երկրորդ մասնագիտական կրթության ստացում:

5. Հավակնորդը մեկից ավելի մասնագիտական կրթություն կարող է ստանալ ինչպես իր ուսումնառած/ուսումնառող, այնպես էլ մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող այլ հաստատություններում կամ կազմակերպություններում (այսուհետ՝ հաստատություն), եթե՝

1) պահպանվում է համապատասխան մասնագիտության տվյալ տարվա համար սահմանված ընդունելության տեղերի ընդհանուր թիվը,

2) դրանցում կրթություն ստանալու ձևերը տարբեր են (չի արգելվում առկա և այլ ձևերի զուգակցումը),

3) ընդունելության կամ կրթական ծրագրին մասնակցության համար հավակնորդին ներկայացվող մուտքային պահանջները բավարար են:

6. Սույն կարգի գործողությունը տարածվում է պետական և հավատարմագրված ոչ պետական հաստատությունների վրա՝ անկախ ուսուցման ձևից:

II. ՉՈՒԳԱՅԵՌ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

7. Ուսանողը զուգահեռ կրթություն կարող է ստանալ՝

1) ընդհանուր հիմունքներով՝ ցանկության դեպքում չկրկնելով ուսումնառած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաները (մոդուլները), եթե դրանք համընկնում են նախընտրած մասնագիտության ուսումնական պլանի հետ,

2) ուսումնառող կրթական ծրագրի հիմքով՝ նախընտրած մասնագիտության համապատասխան կիսամյակից, եթե ուսումնառող և նախընտրած մասնագիտությունների համար սահմանված ուսումնական պլանների ակադեմիական տարբերությունները չեն գերազանցում 8 առարկան (կամ մոդուլները):

8. Նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված, սակայն ուսանողի կողմից չուսումնասիրված, չգնահատված

առարկաները ու առարկաների (մոդուլների) ժամաքանակների 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունները համարվում են ակադեմիական տարբերություններ:

9. Չուզահեռ կրթություն ստանալու համար հիմք է համարվում սույն կարգի 17-րդ կետի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը:

10. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում հիմնական կրթության հիմքով առկա ուսուցման բաժին ընդունված ուսանողը հեռակա ուսուցման բաժնում կարող է ստանալ զուգահեռ կրթություն՝ չորրորդ կիսամյակն ավարտելուց հետո:

11. Չուզահեռ կրթություն ստանալու դեպքում ուսանողը հրամանագրվում է վճարովի ուսուցման համակարգում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողներից: Ուսումնառության ընթացքում ուսանողն օգտվում է նպաստի ձևով ուսուցման վճարի փոխհատուցման իրավունքից:

III. ՀԱՋՈՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

12. Հավակնորդը հաջորդական կրթություն կարող է ստանալ՝

1) ընդհանուր հիմունքներով՝ ցանկության դեպքում չկրկնելով ուսումնառած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաները (մոդուլները), եթե դրանք համընկնում են նախընտրած մասնագիտության ուսումնական պլանի հետ,

2) ուսումնառած կրթական ծրագրի հիմքով՝ նախընտրած մասնագիտության համապատասխան կիսամյակից, եթե ուսումնառած և նախընտրած մասնագիտությունների համար սահմանված ուսումնական պլանների ակադեմիական տարբերությունները չեն գերազանցում 8 առարկան (կամ մոդուլները):

13. Նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված, սակայն ուսանողի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաներն ու առարկաների (մոդուլների) ժամաքանակների 30 և

ավելի տոկոս կազմող տարբերությունները համարվում են ակադեմիական տարբերություններ:

14. Հաջորդական կրթություն ստանալու համար հիմք է հանդիսանում մասնագիտական (այդ թվում՝ բարձրագույն) կրթության դիպլոմը:

15. Հաջորդական կրթություն ստանալու դեպքում ուսանողը հրամանագրվում է վճարովի ուսուցման համակարգում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողներից:

IV. ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՍՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ԶՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

16. Մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդն ուսումնական տարվա սկզբին (ըստ կրթության ձևի) կամ կիսամյակին նախորդող աշխատանքային 15 օրվա ընթացքում դիմում է ներկայացնում տվյալ հաստատության տնօրենին (ռեկտորին):

17. Դիմումի հետ միաժամանակ ներկայացնում է՝

1) կրթության մասին վկայող ավարտական փաստաթուղթը՝

ա. հիմնական կրթության վկայականի կամ միջնակարգ կրթության ատեստատի նոտարական հաստատումով (վավերացված) պատճենը, կամ մասնագիտական (այդ թվում՝ բարձրագույն) կրթության դիպլոմը և ներդիրը,

բ. տնօրենի (ռեկտորի) կողմից հաստատված ակադեմիական տեղեկանքը (զուգահեռ կրթության դեպքում),

2) չորս լուսանկար (3x4 չափսի),

3) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան հավակնորդի համար կամ զինվորական գրքույկ կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների

կողմից տրվող, անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական),

4) գինվորական գրքույկ կամ կցագրման վկայական (գորակոչային տարիք ունեցող հավակնորդից ընդունվում են գինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չգորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ստացած անձանցից՝ Հանրապետական գորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),

5) աշխատանքային գործունեության կամ մասնագիտական աշխատանքի վերաբերյալ համապատասխան տեղեկանքը (դրա առկայության դեպքում),

6) ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում):

18. Դիմումները քննարկելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

Հանձնաժողովում ընդգրկվում են հաստատության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը՝ որպես նախագահ և համապատասխան մասնագիտության գծով դասախոսական կազմի ներկայացուցիչներ:

Դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքները սկսելուն հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

19. Հանձնաժողովի կողմից, մրցութային հավասար պայմանների դեպքում, առաջնահերթությունն ըստ հաջորդականության տրվում է՝

- 1) նախընտրած մասնագիտությամբ աշխատող հավակնորդին,
- 2) առավելագույն մասնագիտական ստաժ ունեցող հավակնորդին,

3) կրթության որակավորման ավելի բարձր աստիճան ունեցող հավակնորդին,

4) կրթության միևնույն որակավորման աստիճան ունեցող ավարտական փաստաթղթի ներդիրում նշված առարկաների առավելագույն միջին գնահատական ունեցող հավակնորդին:

20. Հաստատության տնօրենը (ռեկտորը), հանձնաժողովի եզրակացության հիման վրա, տալիս է ուսանողի ընդունման ժամանակավոր հրաման, որին կցվում է ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ժամանակացույցը: Ակադեմիական տարբերությունների հանձնման առավելագույն ժամկետը մեկ ամիս է:

Հաստատության տնօրենը (ռեկտորը) կարող է ուսանողին ժամանակավորապես կցագրել համապատասխան խմբում և թույլատրել մասնակցելու ուսումնական պարապմունքներին:

21. Ակադեմիական տարբերությունները դրական հանձնելու դեպքում հաստատության տնօրենը եռօրյա ժամկետում հրամանագրում է ուսանողին:

22. Տնօրենը (ռեկտորը) ուսանողին(ներին) հրամանագրելուց հետո հնգօրյա ժամկետում պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում ամբողջական տեղեկատվություն սույն կարգով ընդունվածների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

22 հունիսի 2010 թ.

թիվ 609-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ, ՆԱԽՆԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՏԿԻՐՄԱՆ, ԲԱՇԽՄԱՆ, ԼՐԱՑՄԱՆ,
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1579-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության 10-րդ կետի լ) և ժթ) ենթակետերը՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման» կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման» կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման» կարգը՝ համաձայն հավելված 3-ի:

3.1. Նախարարության աշխատակազմում ավարտական փաստաթղթերի բաշխման, հաշվառման և պահպանման նպատակով 2013 թվականի հունվարից ներդնել էլեկտրոնային բազա:

4. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժնին (բաժնի պետ՝ Ի. Իսրայելյան) և իրավաբանական վարչությանը (վարչության պետ՝ Մ. Գրիգորյան)՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

5. Սույն հրամանի հսկողությունը հանձնարարել աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մինասյանին:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՏՎԻՐՄԱՆ, ԲԱՇԽՄԱՆ, ԼՐԱՑՄԱՆ,
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՅՊԱՆՄԱՆ**

ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի՝ դիպլոմների և դրանց ներդիրների (այսուհետ՝ դիպլոմ) պատվիրման, լրացման, հաշվառման և պահպանման կարգը:

2. Դիպլոմները հատուկ հաշվառման փաստաթղթեր են, որոնց նմուշները հաստատվում են ՀՀ կառավարության կողմից:

II. ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՊԱՏՎԻՐՈՒՄԸ

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների շրջանավարտների դիպլոմների տպագրումը ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) պատվիրում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով անցկացվող համապատասխան մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությանը:

1) Կատարող կազմակերպությունը պատրաստի դիպլոմներն ընդունման-հանձնման ակտով հանձնում է նախարարության աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժին:

2) Ընդունման-հանձնման ակտը ստորագրվում է կատարող կազմակերպության ներկայացուցչի, նախարարության աշխատակազմի ղեկավարի, պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժնի, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի պետերի կողմից:

3) Դիպլոմները պահպանվում են նախարարության աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժնում:

4. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների դիպլոմները պատվիրվում են նախարարության կողմից:

1) Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները ամեն տարի, սահմանված ժամկետներում հայտ են ներկայացնում նախարարություն: Հայտում նշվում են շրջանավարտների ավարտական փաստաթղթերի քանակը (սովորական և գերազանցության):

2) Հավատարմագրված ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները ավարտական փաստաթղթերի հայտը ներկայացնում են պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար սահմանված կարգով:

III. ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձին տրվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ:

Դիպլոմի հատկացման համար հիմք է ծառայում պետական որակավորող հանձնաժողովի որոշումը:

6. Ուսումնական հաստատության շրջանավարտը, որն ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարբերակված ստուգարքների (կիսամյակների գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը հանձնել է «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով, միաժամանակ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) պաշտպանել կամ պետական քննությունները հանձնել է «գերազանց» գնահատականներով, տրվում է գերազանցության դիպլոմ:

7. Դիպլոմների հատկացումը նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններին իրականացնում է նախարարության աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժինը:

1) Դիպլոմներ ստանալու համար ուսումնական հաստատությունները ներկայացնում են գրություն-պահանջագիր՝ շրջանավարտների անվանացանկով:

2) Հատկացվող դիպլոմների քանակը չպետք է գերազանցի ընթացիկ օրացուցային տարվա համար ուսումնական հաստատության ներկայացրած հայտով նշված քանակը:

8. Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին դիպլոմներ տրվում են պետական հավատարմագրում ստացած մասնագիտությունների գծով:

9. Միջին մասնագիտական կրթական ծրագիրն ավարտած անձին՝ դիպլոմը կորցնելու դեպքում, տրվում է կրկնօրինակ՝ ուսումնական հաստատության տնօրինության կողմից՝ համապատասխան փաստաթղթերի (հայտարարություն թերթում և տեղեկանք ոստիկանությունից՝ դիպլոմի կորստի վերաբերյալ) առկայության և արխիվային հիմքերը ստուգելուց հետո:

10. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիրն ավարտած անձին՝ դիպլոմը կորցնելու դեպքում նախարարի հրամանով տրվում է կրկնօրինակ՝ համապատասխան փաստաթղթերի (հայտարարություն թերթում, տեղեկանք ոստիկանությունից՝ դիպլոմի կորստի վերաբերյալ և միջնորդագիր ուսումնական հաստատության տնօրենի կողմից) առկայության դեպքում և արխիվային հիմքերը ստուգելուց հետո:

11. Օրենքով սահմանված կարգով ազգանունը (անունը, հայրանունը) փոխած անձը կարող է իր դիպլոմը փոխարինել նորով: Փոխարինումը կատարվում է ուսումնական հաստատության տնօրինության կողմից՝ անձի դիմումի և նշված համապատասխան փաստաթղթերի հիման վրա, որոնք պահվում են դիմողի անձնական գործում:

12. Շրջանավարտներին ուսումնական հաստատության կողմից դիպլոմները տրվում են անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի ներկայացմամբ կամ այլ անձի՝ նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր ներկայացնելու դեպքում:

13. Դիպլոմի հավելվածը (ներդիր) համարվում է դիպլոմի անբաժանելի մասը և առանց դիպլոմի վավերական չէ:

IV. ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՄԸ

14. Դիպլոմները լրացվում են ուսումնական հաստատության կողմից համակարգչային տպատառերով կամ հստակ և գեղեցիկ ձեռագրով՝ սև թանաքով: Դիպլոմները լրացվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, իսկ դիպլոմի հավելվածը՝ միայն հայերենով:

15. Դիպլոմները և դրանց ներդիրները ստորագրվում են ուսումնական հաստատության տնօրենի, տնօրենի տեղակալի և պետական որակավորող հանձնաժողովի նախագահի կողմից:

16. Դիպլոմում ջնջում կամ ուղղում կատարելն արգելվում է: Շրջանավարտի ազգանունը, անունը, հայրանունը լրացվում է անձնագրում կամ ծննդյան վկայականում եղած գրառումներին համապատասխան:

17. Դիպլոմների լրացման ժամանակ խոտանված բլանկները դուրս են գրվում տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմած ակտով (2 օրինակից), որը հաստատում է ուսումնական հաստատության տնօրենը: Ակտի մի օրինակը պահվում է ուսումնական հաստատությունում, իսկ երկրորդը՝ միջնորդագրի հետ ներկայացվում է նախարարության աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժին՝ նոր դիպլոմ ստանալու համար:

18. Դիպլոմում սխալ գրառում հայտնաբերելիս կամ դիպլոմը գործածության ընթացքում տարբեր պատճառներով ոչ պիտանի դառնալու դեպքում ենթակա է խոտանման:

V. ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱԾՎԱԴՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ

19. Ուսումնական հաստատություններում դիպլոմների ստացման և բաշխման հաշվառումը կատարվում է հատուկ մատյաններում, որոնցում գրառվում են հետևյալ տվյալները:

- 1) Դիպլոմի գրանցման հերթական համարը,
- 2) Դիպլոմ ստացողի անունը, հայրանունը, ազգանունը,
- 3) Մասնագիտության անվանումը, որակավորումը,
- 4) Դիպլոմի համարը,
- 5) Պետական քննական հանձնաժողովի արձանագրության տարին, ամսաթիվը,

6) Փաստաթուղթ ստացող անձի ստորագրությունը:

Մատյանների էջերը համարակալվում, կարվում և կնքվում են:

20. Դիպլոմները գրանցվում և պահվում են ուսումնական հաստատություններում որպես հատուկ հաշվառման փաստաթուղթ: Հաստա-

տության կողմից ստացած փաստաթղթերի հանձնումը կամ փոխան-
ցումը մեկ այլ հաստատության չի թույլատրվում:

21. Դիպլոմների գրանցման մատյանների պահպանման, ինչպես
ևսև շրջանավարտներին դիպլոմների հատկացման համար պատաս-
խանատու է տվյալ ուսումնական հաստատության տնօրենը:

22. Դիպլոմների բաշխումից հետո պետական և ոչ պետական ուսում-
նական հաստատության տնօրենը հաշվետվություն է ներկայացնում գրու-
թյամբ՝ Նախարարի կամ աշխատակազմի ղեկավարի անունով: Հաշվե-
տվությունն իր մեջ ներառում է տեղեկատվություն ստացած, բաշխված և
խոտանված ավարտական փաստաթղթերի համարների և ընդհանուր քա-
նակի մասին՝ ըստ ուսումնական հաստատության, նշումներ պարունակե-
լով սովորողի անվան, ազգանվան, հայրանվան, սեռի, ծննդյան թվականի,
ուսումնական հաստատություն ընդունվելու (հրամանի համար) և ավար-
տելու (հրամանի համար) տարեթվերի, ավարտական փաստաթղթի սե-
րիայի և համարի, անձնագրի սերիայի և համարի, մասնագիտության կոդի
մասին՝ կնքված և ստորագրված տնօրենի կողմից: Հաշվետվությունները
Նախարարություն են ներկայացվում մինչև ընթացիկ տարվա ավարտը՝
թղթային և էլեկտրոնային տարբերակով: Դրանք 5 աշխատանքային օրվա
ընթացքում աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման
բաժնի կողմից ստուգվում են և հանձնվում Նախարարության արխիվ: Թե-
րություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում՝ հաշվետվություն
ներկայացնողին հնարավորություն է ընձեռվում շտկելու կամ վերացնելու
դրանք 5 աշխատանքային օրվա ընթացքում:

(22-րդ կետը խմբ. 08.12.11 N 1293-Ն, 04.05.12 N 401-Ն)

23. Նախարարության աշխատակազմը 2013 թվականի հունվարից
ներդնում և օգտագործում է Նախնական մասնագիտական (արհեստա-
գործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություննե-
րի դիպլոմների բաշխման, հաշվառման և պահպանման նպատակով
էլեկտրոնային բազա, որտեղ մուտքագրվում է տեղեկատվություն՝ ըստ

հաշվետվության էլեկտրոնային տարբերակի: Բազայի վարման կարգը հաստատվում է նախարարի հրամանով: Տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային բազա, բազայի վարման պարտականությունը և շահագործման պատասխանատվությունը կրում է աշխատակազմի պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժինը:

(23-րդ կետը լրաց. 08.12.11 N 1293-Ն, խմբ. 04.05.12 N 401-Ն)

(Չավելվածը խմբ., լրաց. 08.12.11 N 1293-Ն, խմբ. 04.05.12 N 401-Ն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 հունիսի 2009 թվականի N 808-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՒՍԻ 7-Ի N 372 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

1) նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) տարրական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, տարրական մասնագիտացված՝ 1-ին աստիճան, տարրական հատուկ՝ 1-ին աստիճան լիցենզավորման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) տարրական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, տարրական մասնա-

գիտացված՝ 1-ին աստիճան, տարրական հատուկ՝ 1-ին աստիճան լիցենզիայի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) հիմնական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, հիմնական մասնագիտացված՝ 2-րդ աստիճան, հիմնական հատուկ՝ 2-րդ աստիճան լիցենզավորման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) հիմնական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, հիմնական մասնագիտացված՝ 2-րդ աստիճան, հիմնական հատուկ՝ 2-րդ աստիճան լիցենզիայի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան, միջնակարգ մասնագիտացված՝ 3-րդ աստիճան, միջնակարգ հատուկ՝ 3-րդ աստիճան լիցենզավորման կարգը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան, միջնակարգ մասնագիտացված՝ 3-րդ աստիճան, միջնակարգ հատուկ՝ 3-րդ աստիճան լիցենզիայի ձևը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) *(ենթակետն ուժը կորցրել է 27.05.10 N 646-Ն)*

10) *(ենթակետն ուժը կորցրել է 27.05.10 N 646-Ն)*

11) սախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման, լիցենզավորման կարգը՝ համաձայն N 11 հավելվածի.

12) սախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման, լիցենզիայի ձևը՝ համաձայն N 12 հավելվածի.

13) միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 13 հավելվածի.

14) միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) *(ենթակետն ուժը կորցրել է 30.08.12 N 1107-Ն)*

16) *(ենթակետն ուժը կորցրել է 30.08.12 N 1107-Ն)*

17) բակալավրի կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 17 հավելվածի.

18) բակալավրի կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 18 հավելվածի.

19) մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 19 հավելվածի.

20) մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 20 հավելվածի:

(1-ին կետը փոփ. 27.05.10 N 646-Ն, լրաց. 19.08.10 N 1049-Ն, լրաց., փոփ. 30.08.12 N 1107-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչելի Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ու դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» N 372 որոշման 1-ին կետի «ա» ենթակետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի հանրապետություն

վարչապետ

S.Սարգսյան

Երևան 2009 թ.

հուլիսի 21

Կ Ա Ր Գ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ

ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(վերնագիրը լրաց. 19.08.10 N 1049-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

(1-ին կետը լրաց. 19.08.10 N 1049-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն)

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

(2-րդ կետը լրաց. 19.08.10 N 1049-Ն, փոփ. 04.06.14 N 588-Ն)

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու և մասնագիտությունների գծով՝ ընդունելության սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ ուսուցման ձևերի, կրթության հիմքերի, որակավորման աստիճանների գործունեության թույլտվության) մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որո-

շումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա ,Լիցենզավորման մասին ԶՅ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

(3-րդ կետը լրաց., փոփ. 27.05.10 N 646-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

5.1. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

(5.1-ին կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, 24.03.11 N 536-Ն)

5.2. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

(5.2-րդ կետը լրաց. 30.08.12 N 1107-Ն)

II. ԼԻՑԵՆԶԻԱ ԱՏԱՆԱԼՈՒ ԶԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՅՐԱԺԵՏ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և ,Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման, բացառությամբ բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ուսուցման ավարտին տրվող որակավորումը, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի, (սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի հայտատուի կողմից հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով նաև վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազայի), գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները, ուսումնաարտադրական պրակտիկայի բազան), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) *(Ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)*

3) *(Ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)*

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման, բացառությամբ բժշկական նախնական մասնագիտական (արհեստագործական

ծական) կրթական ծրագրերի համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք մանկավարժական, դասախոսական և արտադրական ուսուցման վարպետների կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է մանկավարժների, դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների անունը, ազգանունը, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N2).

6) տեղեկանք նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների, այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) տարածքների (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

8) տեղեկանք ուսումնական և արտադրական, իսկ բժշկական կրթական ծրագրերի համար կլինիկական պրակտիկայի ապահովվածության վերաբերյալ, ընդ որում, սեփական կլինիկական բազաների բացակայության դեպքում ներկայացվում է համապատասխան այլ բազաներից օգտվելու մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրերի պատճենները.

9) կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսումնական պլանը, առարկայական ծրագրերի ցանկը.

10) սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների) կարգերը.

11) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(6-րդ կետը լրաց. 19.08.10 N1049-Ն, խմբ. 02.06.11 N741-Ն, փոփ. 28.04.11 N636-Ն, 24.03.11 N536-Ն, փոփ., լրաց., խմբ. 04.06.14 N588-Ն)

7. Սույն կարգի 7-րդ կետով նախատեսված լիցենզիայի պայմաններին և պահանջներին հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջներն ու պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական մանկավարժական, դասախոսական և արտադրական ուսուցման վարպետների կազմի պահանջի մասով՝ հաստատության մանկավարժական, դասախոսական և արտադրական ուսուցման վարպետների կազմի համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված՝ ՀՀ ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերի պահանջներին, մանկավարժական կազմի առնվազն 80%-ի համար

տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր բազայի ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման սվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. լաբորատորիաները, արհեստանոցները, մարզադահլիճը հագեցվածության համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատած չափաքանակների պահանջներին: Հեռավար ձևով կրթություն կազմակերպելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստենձնատով) ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1028-Ն

որոշմամբ հաստատված Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ուսուցման կարգին համապատասխան ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ էլեկտրոնային կապի միջոցների և անհրաժեշտ այլ սարքավորումների առկայությունը.

գ. բժշկական կրթական ծրագրերի մասով նաև՝ կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենների առկայությունը.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ըստ կրթության ձևերի ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերի համապատասխանությունը նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության պետական չափորոշչի պահանջներին,

բ. սովորողների ընդունելության, փոխադրման, ավարտական, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների) կարգերի համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված կարգերին.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ըստ սովորողների համակազմի գեղարվեստական, մասնագիտական, գրադարանային-տեղեկատվական և այլ գրականության հագեցվածության համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջներին.

6) ուսումնաարտադրական և կլինիկական պրակտիկայի բազայի մասով՝ համապատասխան բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների քանակի նշումով) առկայությունը.

7) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների

կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(8-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ՂԱՂԱՐԵՑՈՒՄԸ

9. Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

_____ - ին

_____ - ից

(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

Հ Ա Յ Տ

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԸՈՒ**

NN ը/կ	Դասիչը	Մասնագի- տությունը	Կրթու- թյան ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուց- ման լեզուն	Ուսուց- ման տև- դու- թյունը	Ուսուց- ման ավար- տին տրվող որակա- վորումը	Ավար- տական փաս- տա- թուղթը	Լիցեն- զիայի գործո- ղության ժամկետը
				1	2	3	4	5					

Կ.Տ.

(ձևը փոփ. 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

_____ թ.

(կազմակերպության անվանումը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Կ.Տ.

Տնօրեն (ռեկտոր)

_____ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Զ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, այն բուհի անվանումը, որն ավար- տել է	Որակավո- րումը	Պաշտոնը, դասավան- դած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղու- թյամբ)	Ստաժը (վարչական) մանկավար- ժական	Տարա- կարգը

_____ Թ.

Կ.Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ**

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____

(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Դասասենյակ			
Լաբորատորիա			
Վիվարիում			
Կլինիկական ամբիոն (բազա)			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան - ընթերցասրահ			
Համակարգչային սենյակ			

Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) լաբորատորիաների, արհեստանոցների, գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների վիճարկումի, կլինիկական ամբիոնի (բազա) հագեցվածության ցուցակը.

2) մարզագույքի ցուցակը:

(ձևը լրաց. 04.06.14 N 588-Ն)

_____ թ.

Կ.Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ**

Կազմակերպության անվանումը _____

Տնօրեն _____

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____ ,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

*(հավելվածը լրաց., փոփ. 27.05.10 N646-Ն, լրաց. 19.08.10 N1049-Ն,
խմբ. 02.06.11 N741-Ն, փոփ. 28.04.11 N636-Ն, լրաց., փոփ., խմբ.
24.03.11 N536-Ն, լրաց. 30.08.12 N1107-Ն, փոփ., լրաց., խմբ. 04.06.14
N588-Ն)*

Հավելված N 12

ՀՀ կառավարության 2009 թվականի

հուլիսի 9-ի N 808-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Լ Ի Ց Ե Ն Չ Ի Ա

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

ՍԵՐԻԱ Ա

N 0000

Սույնով վավերացվում է, որ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

(գտնվելու վայրը)

(գործունեության իրականացման վայրը)

իրավունք ունի իրականացնելու
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական
ծրագրեր

Նախարար _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Կ.Տ.

(լիցենզիայի գործողության ժամկետը)

(հավելվածը լրաց. 30.08.12 N 1107-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Կ Ա Ր Գ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու և մասնագիտությունների գծով՝ ընդունելության սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ ուսուցման ձևերի, կրթության հիմքերի, որակավորման աստիճանների գործունեության թույլտվության) մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրա-

կանացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա:

(3-րդ կետը լրաց., փոփ. 27.05.10 N 646-Ն)

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

5.1. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

(5.1-ին կետը լրաց. 27.05.10 N 646-Ն, 24.03.11 N 536-Ն)

5.2. Լիցենզավորված անձինք լիցենզավորող մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը:

(5.2-րդ կետը լրաց. 30.08.12 N 1107-Ն)

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԶԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՅՐԱԺԵՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ուսուցման ավարտին տրվող որակավորումը, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի (սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի հայտատուի կողմից հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով նաև վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազայի), գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները, ուսումնասարտադրական պրակտիկայի բազան), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) *(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)*

3) *(ենթակետն ուժը կորցրել է 28.04.11 N 636-Ն)*

4) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականու-

թյան, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

5) տեղեկանք դասախոսական կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է դասախոսների անունը, ազգանունը, կրթությունը, ավարտած ուսումնական հաստատությունը, որակավորումը, պաշտոնը, առարկան, որը դասավանդելու է, տեղեկությունն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N 2).

6) տեղեկանք միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների, այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) տարածքների (ձև N 3).

7) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

8) տեղեկանք ուսումնական և արտադրական, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ կլինիկական պրակտիկայի ապահովվածության վերաբերյալ.

9) կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսումնական պլանը, առարկայական ծրագրերի ցանկը.

10) սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների) կարգերը.

11) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

(6-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, փոփ. 28.04.11 N 636-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

7. Հայտատուի կորմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջներն ու պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական մանկավարժական և դասախոսական կազմի պահանջի մասով՝ դասախոսական կազմի համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված՝ պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջներին, հաստատության դասախոսական կազմի և արտադրական ուսուցման վարպետների 80%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության կա-

ռավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի հագեցվածության համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատած չափաքանակների պահանջներին: Հեռավար ձևով կրթություն կազմակերպելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ հաստատված Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ուսուցման կարգին համապատասխան ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ էլեկտրոնային կապի միջոցների և անհրաժեշտ այլ սարքավորումների առկայությունը.

գ. բժշկական կրթական ծրագրերի մասով նաև կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենների առկայությունը.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ըստ կրթության ձևի ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերի համապատասխանությունը միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր և մասնագիտությունների պետական չափո-րոշիչների պահանջներին,

բ. սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների) կարգերի համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված կարգերին.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ըստ սովորողների համակազմի գեղարվեստական, մասնագիտական, գրադարանային-տեղեկատվական և այլ գրականության հագեցվածության համապատասխանությունը ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված չափաքանակների պահանջներին.

6) ուսումնաարտադրական կամ կլինիկական պրակտիկայի բազայի մասով բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների քանակի նշումով) առկայությունը.

7) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, ,Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է:

(8-րդ կետը խմբ. 02.06.11 N 741-Ն, 24.03.11 N 536-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ՂԱՂԱՐԵՑՈՒՄԸ

9. Միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

_____ -ին
_____ - ից

(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

Հ Ա Յ Տ

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆՍԼՈՒ**

NN ը/կ	Դասիչը	Մաս- նա- գիտու- թյունը	Կրթու- թյան ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուց- ման լեզուն	Ուսուց- ման տև- ողու- թյունը	Ուսուց- ման ավար- տին տրվող որակա- վորումը	Ավարտա- կան փաս- տաթուղթը	Լիցեն- զիայի գործու- ղու- թյան ժամ- կետը
				1	2	3	4	5					

Դիմող՝ _____ թ.
(ձևը փոփ. 17.02.11 N140-Ն, 24.03.11 N536-Ն, լրաց. 04.06.14 N588-Ն)

_____ թ.

(կազմակերպության անվանումը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Տնօրեն (նեկտոր) _____

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Զ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, բուհը ավարտած	Որակավորումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը (վարչական) մանկավարժական	Տարակարգը

(ծևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ**

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____

(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ _____

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Լսարան			
Լաբորատորիա			
Վիվարիում			
Կլինիկական ամբիոն (բազա)			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան-ընթերցասրահ			
Համակարգչային սենյակ			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) լաբորատորիաների, արհեստանոցների գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազա) հագեցվածության ցուցակը.

2) մարզագույքի ցուցակը:

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն, լրաց. 04.06.14 N 588-Ն)

_____ Թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ**

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Տնօրեն _____

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____ ,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

(ձևը փոփ. 17.02.11 N 140-Ն)

(հավելվածը լրաց., փոփ. 27.05.10 N646-Ն, փոփ. 17.02.11 N140-Ն, խմբ.

02.06.11 N741-Ն, փոփ. 28.04.11 N636-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.03.11 N536-

Ն, լրաց. 30.08.12 N1107-Ն, փոփ., լրաց. 04.06.14 N588-Ն)

Հավելված N 14
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 9-ի N 808-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Լ Ի Ց Ե Ն Չ Ի Ա
ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
(վերնագիրը փոփ. 04.06.14 N 588-Ն)

ՍԵՐԻԱ Ա

N 0000

Սույնով վավերացվում է, որ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

(գտնվելու վայրը)

(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջին մասնագիտական կրթական ծրագրեր

Նախարար

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ թ.
Կ.Տ.

(լիցենզիայի գործողության ժամկետը)

(հավելվածը լրաց. 30.08.12 N1107-Ն, փոփ. 04.06.14 N588-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԿՈՒ համակարգը կարգավորող թիվ մեկ օրենքը	3
ՀՀ օրենքը՝ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին (ընդունված է 2005 թ. հուլիսի 8-ին).....	4
Իրավական փաստաթուղթ՝ միտված համակարգի թափանցիկությանը.....	42
ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը.....	43
ՄԿՈՒ համակարգում ակադեմիական արձակուրդ տրամադրելու ընթացակարգը.....	82
ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի N997-Ն 22 դեկտեմբերի 2006 թ. հրամանը.....	83
Ուսանողական նպաստը և պետական կրթաթոշակի տրամադրումը ՆՄՄԿ համակարգում.....	88
ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թ. մարտի 1-ի N297-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ...	89

ՆՄՄԿ համակարգում ուսանողական իրավունքը վերականգնելու հնարավորությունները.....	98
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 5 դեկտեմբերի 2011 թ. N 1278-Ն հրամանը	99
ՀՀ ՄԿՈՒ համակարգում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության ընթացակարգը.....	109
ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 25 օգոստոսի 2011թ. N1295-Ն որոշումը	110
ՆՄՄԿ հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման ընթացակարգը.....	120
ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 21 հուլիսի 2006 թ. N 638-Ն հրամանը.....	121
Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 12 մարտի 2011 թ. N194-Ն հրամանը	140

<p>ՀՀ հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի 22 հունիսի 2010թ. N 609-Ն հրամանը.....</p>	147
<p>ՀՀ կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և ՀՀ Կառավարության 2000 թ. հուլիսի 7-ի N 372-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ Կառավարության 9 հուլիսի 2009 թ. N808-Ն որոշումը</p>	156

ԿԱՐԵՆ Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ /ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԵՎ ՄԻՋԻՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

(ՆՄՄԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Հրատարակչական աշխատանքները՝ Մարիամ Պետրոսյանի
Աշխեն Այվազյանի
Աստղիկ Միրզաթունյանի

Սրբագրիչ՝

Գոհար Ամիրբեկյան

Ստորագրված է տպագրության 12.12.2014 թ.: Ծավալը՝ 12 մամուլ:
Ֆորմատ՝ 70x100 ¹/₁₆: Տպաքանակը՝ 100 օրինակ:
«Կրթության ազգային ինստիտուտ», Երևան, Տիգրան Մեծի 67,

հեռ՝ 57 48 20